ԿԻԼԻԿԻԱ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲԺՇԿԱՑՆԱԿ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՏՈՒԺՈՐ ՓԱՐԻԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՃԻՄԱՐԱՆԻ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

թիւ 9, մարտ 1.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Թ. ՏԻՒՐՔԱԿԱՆ ՎԵՋԻՐԱՆ, թիւ 20

1868

ԿԻԼԻԿԻԱ

ՀԱՆԳԷՍ

ՄԻԱՄՏԵԱՅ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ· 1868, ՄԱՐՏ 1· Թիւ 9·

ԱՋԳԱՅԻՆՔ ԵՒ ՀԻԱՆԳԱՆՈՑ

ՄԵՐ Մեծարուս Խաժանորդաց շատերուն թախանձանօք այս անգամ միտքը ինչ բան ևս պիտի խօսինք, մէկ քանի շաբաթներէ ի վեր մանաւանդ կ· Պոլսոյ Ազգային մեծագոյն մասին խորհրդածութեան և խօսակցութեան նիւթ եղող, Ազգային Ժողովոյն վրայ· յայտնելով առթիւս թէ; սոյն խնդրոյն վերաբերեալ ամէն մի վեր ընդունած և յետ այսորիկ ընդունելիք նամակներէն և ոչ մին կհրատարակենք· և այս ալ ուրիշ պատճառի համար չէ, այլ միայն խոստմունքնիս պահելու, զոր ըրած ենք; Կիլիկիայիս առաջին թուով, այսինքն՝ անձնական վէճերու; Հայոց վերաբերեալ գրութիւնք չենք կրնար ընդունիլ և հրատարակել·

Մենք կթէ, Ժողովոյն վրայ խօսելնանք, չէ թէ, նորին Տնօրէնութեան ի՞նչ եղանակ կառավարելուն վրայ դիտողութիւն ընել էր· ասի մենք չկարծուիր· մենք միայն, իբրև ազգային անհատ, մեր կարծիքն յայտնելինք, թէ տանի ոչ Ժողովոյն, կամ ոչ և է Ազգային Ժողովականին, Դպրոց կամ Վանք, ինչ որ, էր առաջուց ձեռք փոխուելն էր եկամուտը ըստնելոյ, անկարելի է ոչ, սոյն Ժողովականները; Դպրոցը, Վանքն, ինչպես և Ազգային Ժողովոյն; էր ներկայ և ապագայ անդորրութիւնը, խաղաղութիւնը, հանգստութիւնն ու ապահովութիւնն ուներնայ· ասկ 2 անգամ 2, չորս կընէ նման ճշմարտութիւն մ'է· ուր որ ալ երթաս, ինչպես որ ալ բազմապատկես, միշտ 4 պիտի ընէ· Օրի ինչպես ըսած էինք, թէ փոփոխութեան մը կրնայ էր անյոռետր ձեռայութիւնը պատրեցնել, ինչպես որ եղաւ

նայեցէք և ապրելէ առնչ ուրիշ , որոյ գործելուն կամ քիչնալուն առթիւ , փանոսեանն ալ անկարող եղաւ դիմանալ . և չէ թէ փանոսեան մը , այլ կառավարութեան գանձ մ'անգամ անկարող էր , և է , դիմանալ :

Ամենք զփանոսեանը կգովեն , ոմանք զանի կրամբասեն , որ մեծ անիրաւութիւն մ'է . որովհետև եթէ փանոսեան վատահելի չէր ; ինչո՞ւ յանձնեցին անոր . եթէ գողութիւն ըրաւ , ո՛վ ստուգեց . — այսպէս պէտք չէ վարձատրել , աղգասիրաբար դիշեր ու ցորեկ հոգւով և մարմնով աշխատող աղգային մը . պէտք է , ընդհակառակը , քաջալերել այնպիսին , զանի և ուրիշները իրախուսելու . մանաւանդ որ Ազգային Վարչութիւնն իր կողմանէ յատուկ Վ՛ասնաժողով մը խաւրելով ամէն բան աչքէ անցուցած ու քննած , կ. Պոլսոյ ամէն Ակնղեցեաց մէջ յատուկ շրջաբերականներ խաւրած է , Ազգայինքն յորդորելով փանոսեանի օգնել խնդրելու :

Ահա խնդիր մը , որ ազգային մեծ գժտութեանց առիթ կրնայ ըլլալ . ուստի փոխանակ ամէն օր նորանոր յայտարարութիւններ հրատարակելու , պէտք է խոհեմաբար գործին յաջողութեանն և հասարակութեան խղճին ու մտաց հանդարտութեանը համար ամենէն դիւրին ճամբան փնտռելով գտնել ու յառաջ երթալ . զի ինչպէս կըսէ երկրաչափական առածը թէ , «ծղիղ գիծն ամենէն կարճ ճամբան է :

Խնդիրն , ամէն Հայու վերաբերեալ խնդիր մ'է . որովհետև Իւանդանոցն , ոչ փանոսեանին , ոչ Ազգային Վարչութեան , ոչ Պատրիարքի , ոչ Պատրիարքարանի , ոչ իմն և ոչ իսկ քո՛ւկդ է , այլ ամենուս ալ է . ամէն Հայու կվերաբերի , մանաւանդ կ. Պոլիս բնակող Հայոց . ուստի փոխանակ ասոր կամ անոր ըրածին , ընելիքին ; ըսածին և ըսելիքին վրայ երկար վիճաբանութիւններ ընելու , պէտք է և պարտք ամենուս , Իւանդանոցն այնպիսի կացութեան մը մէջ դընել , որպէս զի կարող ըլլայ օրական ծախքն իր օրական եկամուտովը հոգացուիլ . այս է միակ դարման և վաճառն ամէն տեսակ տարաձայնութեանց , գժտութեանց և բամբասանաց :

Ազգային Իւանդանոցի վրայ մինչև ցարդ ըսածներնիս էկրկնելու համար , և իբր ազգային անհատ , ազատութեամբ մեր կարծիքը կհրատարակենք , որք են հետևեալներն :

Ա. — Ազգային Հիւանդանոցն , ինչպես ամէն Ազգային Հաստատութիւն , Եկեղեցի , Վանք , Դպրոց , պետք է իր առանձին Տեսչութենն ունենայ , մեղր հսկողութեամբ ընդհանուր ժողովոյ . որոյ ոչ դիտն պատասխանատու ըլլայ , այլ և համաբաժին :

Բ. — Ազգային Հիւանդանոցին մէջ պատպարելոց նիւթ , իբր եկամուտին

հաճոյապ ըլլալո՛ ե , որպէս դի պարտուէ ազգս ծոյ :

Գ· — Ազգային Հիւանդանոցի Տնօրէնն ինչպէս որ ուրիշ ամեն պաշտօնեայ՛ ի պէտ է իրենց ամսականն առնենան :

Դ· — Պատրիարքարանն , իբրև կեդրոն , Ազգային վարչութեան , պէտ է հսկէ , Հիւանդանոցին վրայ , ինչպէս Ազգային ամեն պեսակ հաստատութեանց և Գործոց · սակայն , Հիւանդանոցի որ և է եկամուտի բնաւ ձեռ՛ դպանելո՛ դի :

Ե· — Հիւանդանոցի ամեն պեսակ եկամտակաները պէտ է ձայն , այդ հաստատութեան վրայ հսկող Ժողովին յանձնել· այս ալ Տնօրէնին , ինչպ կանոնաւոր հաշիւով :

Զ· — Հիւանդանոցի Տնօրէնը պէտ է ամեն ամիս հաշիւ տալ , ի հրապարակութիւն :

Է· — Հիւանդանոցի Տեսչութիւնն հիմակուհիմայ , ինչպ իր եկամուտին համեմատ ծախ՛ ընելով , աշխատելո՛ է , ամեն օր , եկամուտ աւելցնել· ինչպէս ընելիոյ գիտնի վրայ դիւռ դիւռ դալ , հայլն :

Կանոնք են առաջիմ մեզ համար ամենեն կարևոր երևցածներն :

Կիսափաքինք , որ Ազգային , առանց խոհեմութեան գործեն · — համբերութեամբ , հաստատամտութեամբ ամեն դժուարութիւնք կիսրատին · ամենքնիս մեր նպատակին և փափաքին կրնանք հասնիլ , այսինքն՝ Ազգային Հիւանդանոցը , ցորօրինակ Պատրիարքարանէ զատել , հաստատ եկամուտովն իր ծախքը հոգալ , հայլն , եթէ աշխատինք խոհեմաբար , սիրով և միութեամբ · — ոխ , կիրք հեռի ըլլալու են : Հմռնանք , որ գործն , ոչ ասոր , ոչ անոր և ոչ օտարինն է , այլ ամենուս ալ · ուստի ընդհանուրին վերաբերեալ գործը ; պէտք է ընդհանուրին , կամ գոնէ մեծ մասին համաձայնութեամբը տնօրինուի · ընդհանուրին իրաւունքն ոտնակոխ չըլլալու համար , ընդհանուրը ներկայացնող ամեն անհատ , ես , դու , նա , պէտք է որ պարտքերնիս ճանչնանք · զի պարտքերնիս ճանչնալով ; իրաւունքնիս ալ պաշտպանած կըլլանք :

Ով որ բարեկամ է աղքատին , և պաշտպան Ազգային Հիւանդանոցի մէջ պատսպարեալ որբերու , խեղդերու , հիւանդներու , ծերոց և անկարներու , հմռնալու է թէ , նոցա իրաւունքը պաշտպանելը մեր ամենուս ալ սրբազան պարտքն է · և նոցա արդար իրաւունքը պաշտպանելու համար , պէտք է որ աշխատինք սիրով ; միութեամբ , և մանաւանդ միշտ խոհեմութեամբ , հեռի կենալով ամեն տեսակ յուզմունքներէ , վնասակար ոխակալութիւն և կիրք հոտող վէճերէ ; մանաւանդ ասոր կամ անոր գործիք ըլլալէ · · · · · :

ԱՌՈՂՋԱԿԱՆ

Ցո՞ւ կանայ է՞նչես ապրել- են* ։

Ա՛ռողջապահութիւնն իր պաշտօնը կատարած չըլլար , եթէ Ա՛մուս- նութեան խնդրոյն մէջ , միայն երկու ամուսիններուն ընտրութեան մասին զգաղի , մոռնալով ծնանելիք զաւակաց առողջութիւնն . իր պաշտօնն անթերի կատարած չըլլար , եթէ մարդ արգանդին մէջ իսն ամիսներ սնանող պտղին վերաբերեալ պէտք եղած առողջապահական խնամքները մոռնայ : Խնամքներ , որոնցմէ կախումն ունին ծնածին ծնանելիքին ապագայ առուգութիւնն ու կատարեալ առողջութիւնն :

Ա՛ռողջապահութիւնն , ամէն բանի մէջ , զգուշութիւններ և զըր- կումներ կպահանջէ , յանուն առողջ-ինքն , որոյ արժէքը , զանի կո- րուսած ատենը միայն կգիտցուի : Ա՛ռողջապահութեան պահանջած զըր- կումներն իրական և ներկայ են . իսկ վտանգներն երևակայեալ են , և ապագային մէջ կուգան : ասոր համար է որ , այս մեծ և օգտակար արհեստին , (առողջութիւնը պահել սովըեցնող արհեստին) համար , պարզապէս թոյլ կամ անտարբեր յարգանք մը կբարոզեն : Ուրիշին համար կյարգենք իր սկզբունքներն , և այս կապացուցանենք ամէն օր թէ աւելի դիւրին է , առողջապահական քան ճշմարտութեանց հաճիլ , համոզուիլ և ընդունիլ , քան թէ անոնցմէ մին գործադրել :

Այց այս մասին նոյնը չէ , առողջապահութիւնն , որքան զըրաւոր այնքան ալ վճռանձն լծակ մ՛ունի , որով վրայ կրնայ ապահովիլ . այս լծակն է , մայրական սէրն ու գորովն : Կին մը յաղանելէն յետոյ , ալ ինքն ինքզինքին չէ . այլ բոլորովին կատարելու վճռակեալ մեծ պաշտօնին կվերաբերի . ամէն բան , նմանք , զգուշութիւնք ի գործ դնելու է . և առողջապահութեան խստիւ պահանջածներն ; կատարուած պաշտօնին գոհունակութիւնն ունին իրրև ներկայ պաշտօն . և մայրու- թեան համար ապագայ ուրախութիւններն ալ իրրև հատուցում : ուստի այս ուրախութիւններն իրենց փոխարէնն ունին , ինչպէս ու- րիշներն , և ամէն ուրախութիւններէն աւելի , որուն փորձն ալ ի սկզբանէ կընէ :

Ցաղթիւնը , կնոջ համար այնպիսի վճռակ մ՛է , որ զանի բոլո- րովին կփոխէ . իր բնաւնական , իր բարոյական և իր զգայողական

*Տես Կիլիկիա . թիւ 7 . երես 230—237 ։

կեանքը բոլորովին կփոխուի. ուստի յղի կնոջ առողջապահութիւնն ալ, ուրեմն, մասնաւոր օրէնքներ և կանոններ ունի. և եթէ այս մասին միայն ընդհանուր կանոններ ցուցնելով բաւականանանք, պաշտօննիս կատարեալ ըրած չենք ըլլար:

Նախնեաց օրինաց և սովորութեանց մէջ արձանագրուած էին յղի կնոջ վերաբերեալ յարգանքն ու զգուշութիւնք. ինչպէս և Հռոմայ մէջ, յղի կանայք, բնաւ դատաստանական ատեան չէին կանչուեր. և Աերայեցւոց օրէնքն, որոյ որչափ խիստ ըլլալն յայտնի է, այսու ամենայնիւ, պահքէ և ծոմէ ազատ կընէր. այս սովորութիւնն Ակեղեցին ալ պահած է: Նայց այն ժամանակն, ուր կանայք պարտաւորեալ են զանազան զգուշութեանց դիմը ճանաչել, նոյնպէս զանազան նախապաշարմանց վտանգը կամ չարիքը որոնց կզոհուին, այն ժամանակն արդարև ասիկա է:

Տգիտութիւնն և կիրք, առողջապահութեան երկու գլխաւոր թշնամիներն են. առաջինին հետ մաքառիլն, իր պաշտօնին մէկը կատարել է. և միանգամայն բոլորովին դիւրացնել է երկրորդն, այսինքն բարոյականութիւնն:

ԱՌԱՋԻՆ

Սկսինք նախ, ըէ յղի կին մը, ինչպէս ապանելոյ է:

Յղի կանայք մեծ զգուշութիւն ընելու են կերակրոց: Յղութեան առաջին օրերուն երևան եկած, մարսողական բազմատեսակ բայց խիստ սովորական խանգարումներն, անկարելի կընեն, յղի կնոջ ուտելիք կերակրոց քանակութիւնը կանխաւ որոշելը: Սակայն պէտք է յիշել թէ, եթէ յղի կանացմէ ոմանք չափազանց ախորժակ կունենան. շատերն ալ ընդհակառակը, միշտ մը բան ուտելու ախորժ չեն ունենար. այնպէս որ, այս վերջիններուն համար, աւելի պէտք է ախորժակ բանալ, փոխանակ կերակրոց քանակութեան սահման որոշելու զբաղիլ: Այսու ամենայնիւ, ընդհանուր կերպով, սա կրնանք ըսել թէ, յղի կինը, թէ ինքզինքը, և թէ իր արգանդին մէջ մեծցնելիք պտուղը սնուցանելու պէտք ունենալով, կարևոր է որ կերածին քանակութիւնը սովորականէն աւելի ըլլայ. բայց կերածն օգտակար ըլլալու համար, պէտք է որ ախորժակին ճշմարիտ աւելցումն ուտուի. և ոչ թէ սուտ ախորժակով, որ պտուղ է երևակայութեան և նախապաշարմանց, որով շատերը խաբուելով, ստամոքսնին չափազանց կլեցնեն. ուսկից ծնունդ կառնուն, մարսողական շրջունակ խանգարումներ, որք կարգիլուն իրենց գաւկին զարգացումը:

կամ արեան շրջանի խանգարումներ, որք յղութիւնը վտանգի մէջ կդնեն, երբ այսպիսի չափազանց անունդ մը թոյլտուութիւն ըլլայ։

Կառափէն (Վաղղեացի բժիշկ), որ յղի կանանց պատղաբանութեան վրայ շատ գրուածներ ունի, դիտած է թէ, յղութեան չորրորդ ամիսը մանող կանանց ախորժակը սովորականէն աւելի կբացուի, և հետևաբար սոյն ժամանակին մէջն է որ յղի կանայք, մեծ զգուշութիւն ընելու են այս մասին։

Ետ յղութեան վերջին ամիսներուն մէջ, կերակրոց քանակութիւնն, յղի կանանց ընելիք մարմնական կրթութենէն, շարժումէն կախում ունի։ Ա.յն յղի կանայք, որոց ոտքերն, յղութեան առթիւ կուռենան, և որոյ համար յակամայս ժամանակին նստուկ անցնել կըդատապարտուին, պէտք է զգուշանան չափազանց ուտելէ, եթէ կուզեն և կրնան, թէ իրենց և թէ իրենց զաւակաց առողջութիւնն անվտանգ պահել. այս մասին, ինչպէս ամէն կէտերու մէջ, իրենց և իրենց զաւակաց շահը, խիստ կերպիւ միացած են։

Յղի կանանց, առնելիք սնունդը, ուտելիք կերակրոց տեսակէն կամ որպիսութենէն կախումն ունի, և պէտք է սահմանուի, նոցա կազմուածքի առողջութեան, կորովութեան, արեան շատութեան, և նոյնպէս տկարութեան և արեան քիչութեան համեմատ։ Ուստի յղի կնոջ արեան շատութիւնը կամ քիչութիւնն որոշելը, հասկնալը, ճանչնալն, այնքան դիւրին չէ, ինչպէս կմտածեն, կկարծեն սովորաբար ընտանիքներն։

Շատ քիչ տարիներ առաջ, կանայք և բժիշկք, կկարծէին թէ յղի կանանց արիւնը շատ է. և հետևաբար յղի կանանց սրտի բաբախմունքները, գլխու տաքութիւններն, աչաց խաւարումները. խելքի պղտոութիւնները, շնչառութեան դժուարութիւնն, ևայլն, արեան շատութեան նշաններ կկարծէին. արեան շատութիւնը կմեկնէին մանաւանդ, յղի կանանց ամսական սովորութեան արիւնը կորսնցնելէն դադրելնուն. բայց այս կարծեաց սխալ ըլլալը ճանչցուեցաւ վերջապէս։ այս մասին աշխատողաց առաջինն եղաւ, Ռազը, Վաղղեացի բժիշկը, զոր պէտք է կոչել յղի կանանց բարերարը. զի Վաղղեացի այս բըժիշկն, ընդհակառակը փորձով հաստատեց թէ, յղի կանանց արեան քանակութիւնն, ընդհանրութեան վրայ խօսելով, կքիչնայ. և հետևաբար, սննդարար կերակուրք, արիւնը շատցնող միջոցներ աւելի պէտք են և անհրաժեշտ, քան թէ, ամիսն անգամ մի, կամ թէ յղութեան իւն ամիսներուն մէջ ամենէն քիչը մէկ քանի անգամներ արիւն առնել։ Ուրեմն առնելու այս ընդհանուր սովորութեան վրայ, ընտանեաց ուշադրութիւնը կգրաւենք. և այս մասին ամենէն դիւրին և

ապահով միջոց, հետևեալը կխրատենք թէ, ամէն յղի կին, յօդուտ իր անձին և ընտանեաց, պէտք է որ, արիւն չառած, իր ընտանեկան բժիշկին հարցնէ. այս է այս մասին, մեր տալիք առողջապահական խրատն. կիսափաքինք որ մեր այս ըսածն, ամէն ընտանիք լսէ, կարդայ, և համողուի. ղի բժիշկ ըլլալովս, փորձառութեամբ կգրեմ այս տողերը. ղի տեսած ենք և կտեսնենք ամէն օր այնպիսի ընտանիքներ, որք պճէպ և պատա դահեկներու անգիտութեամբ ըսածներուն հաւատալով, իրենց և իրենց զաւկին առողջութեանն համենէն կարևոր կարմիր հեղուկը, կենսատու արիւնը կքիչցնեն, որք կպարտաւորին ամէն միջոց ի գործ դնելով շատցնել։

Մենք մինչև այսօր, մտած ելած տուներնուս մէջ այսպիսի առողջապահիկ խրատներ տալէ չենք դադրիր, մանաւանդ որ շատ ընտանիքներ, յղի կիներ, մեր այս ըսածին հաւատալով, մեծապէս օգտած են. բայց ներկայ յօդուածիս առթիւ, հոս ալ յիշել պարտք համարեցինք, յուսալով որ կանայք ալ աչք մը ձգեն մեր Կիլիկիային վրայ*։ Շարունակենք մեր խօսքը...։

Առողջաբանութեան մէջ, ինչպէս նաև բժշկութեան, վտանգ մը հեռացնելն, ուրիշ վտանգ մը արգիլել է։ Եթէ պէտք է ընդունիլ և սովորիլ թէ ընդհանրապէս, յղի կանանց արիւնը կքիչնայ, գիտնալու է և ևս թէ, կրնայ ալ շատնալ խոպոչմամբ, որուն՝ այսինքն, արեան շատութեան նշաններն ալ դարձեալ միայն բժիշկը կարենալով ճանաչել, այս մասին ալ, դարձեալ բժիշկին խորհուրդն առնելով արիւն հանելու է. սակայն իբրև կանոն առողջաւանական, կըսենք և կրաւամբ թէ, սովորականէն և պէտքէն աւելի (որ խիստ հազուագիւտ է) արիւն ունեցող յղի կանայք, առանց կաթիլ մ՚արիւն հանել տալու, կրնան հանգիստ ըլլել, եթէ կերակրոց քանակութիւնն ու որակութիւնը փոխեն։

Յղի կանայք, միշտ զգուշանալու են գժուարամարս և արիւնը դրդռիչ կերակուրներէ. պէտք է միտուին միշտ դիւրամարս, սննդարարներն, ու արիւնը բարեխառնողները։

Գինին, զորօրինակ, երբ ընտիր է տեսակաւն, երբ պէտք եղած չէն աւելի չխմուի, և միշտ ջրախառն, խիստ օգտակար է, առանց որևէ վնասակար հետևութեանց։ Մանաւանդ որ, գինին անհրաժեշտ է, և ամէն կերակուրի ատեն, անպատճառ գործածելու են ան յղի

---

*Ուրիշ առթիւ, մանրամասնաբար պիտի խօսինք, մեր շատ ընտանեաց մէջ, մեծամեծ վնասներ պատճառող, տգէտ դահեկներուն վրայ։

կանոյք, որոնց արիւնը քիչնալու նշաններն երևան կելլեն։ Սակայն պէտք է դիտնալ, մանաւանդ չմոռնալ թէ, այն յղութիւնն, որ կանոնաւորապէս յառաջ կերթայ, յայնժամ պէտք չէ գիրկ խմցնել տալ անոնց, որք սովորութիւն չունին, զի կերակրական սովորութեանց յարգն, արդարև, առողջապահական սկզբունք մ'է, զոր պէտք է պատուել։ Ուսկ ոգելից ըմպելիքներն, ինչ որ ալ ըլլան, համով, գոյնով և տեսակաւ, ջուր, էթէր, ամպէրկօ, պոռնկի ևայլն, պէտք է բոլորովին արգիլուին. զի ամենքն ալ վտանգաւոր են, և միասակար, արեան շրջանը սովորականէն աւելի արագցնելովնին, որն որ արդէն յղութեան մէջ սովորականէն աւելի արագ է. միայն մէկ կէտի մը մէջ ներելի են ոգելից ըմպելիքներն, այն ալ սրտի խառնուածք ունեցողներուն. զի փորձուած է թէ, ոգելից ըմպելիքները, թէ՛ մօր և թէ՛ զաւկին, մեծապէս միասող սրտի խառնուածքներուն խիստ օգտակար են. այսու ամենայնիւ, աւելի օգտակար է որ, սրտի խառնուածք ունեցող կանայք, դարձեալ բժշկին խորհուրդն առնեն ևս այս մասին։

Յղի կանանց կերակրոց վերայ խոսելու առեններս, փափուկ խընդիր մը կներկայանայ, զոր բոլորովին լուծել չկրցանալով, մէկ քանի լուռ միայն պիտի ըսենք. այն է կերակրական գրգիռներն, այն սուտ անբնական ախորժակները, զոր կկոչէր Ա. քթոռատիուս, պտուղ նախանական ունակութիւններուս, կանխակալ պաշարմանց, և ինչո՞ւ համար չըսենք, միանգամայն գործիք տգիտութեան։

Խորհելէնէ, զանազան պտղոց և պղեպղ բիծերը, հասարակաց գաղափարներուն, գլուխնուն մէջ հաղարներով արմատացեալ, սուտ դէպքեր, զանի կմեծցնեն դեռ ամէն օր, ի շնորհս մարգարէական ցոյցերուս, թէ, ձննդական բիծերը, կրնան դիտողութեան ներկայացուիլ։ "Ո՛չմարտանման է, կըսէ, Մօնթէյն, Վաղղեացի փիլիսոփայն* թէ, տեսքերու, ցնորքներու, և ասոնց նման կարգէ դուրս արգեանց ճշմարիտ յարդն, երևակայութեան կարողութենէն յառաջ կուգայ, ազդեցով գլխաւորապէս, ռամկաց աւելի տկար և դիւրահաւան հոգիներուն վրայ. այնչափ հաւատք կընծայեն, որք արդարև չտեսածնին, տեսնել կկարծեն"։ Այս է արդարև ճշմարտութիւնը, զի հազարաւոր կիներ կպատմուին, որք կարդէ դուրս կերակրական, փափաքներնին չկատարուելով, ծնած զաւակներուն վրայ, կարգէ դուրս նշան, բնաւ տեսնուած չէ։

Այս մասին աւելի չենք երկարեր, զի այսպիսի նախապաշարմունք, միայն տգիտութեան արգիւնք ըլլալով, միակ միջոց, աղջկանց

*Տես Վիկիկա. Թիւ 5։

դաստիարակութիւնն է. քանի որ, սովորութիւն ըլլալ սկսած է, օրիորդաց դպրոց երթևեկելն, այսպիսի նախապաշարմունք, մեր աղգին մէջէն ալ պիտի անհետանան, ինչպես եղած են և կըլլան ամէն քաղաքակրթեալ և քաղաքակրթըւող Ազգաց մէջ։

Ընդհանրապէս, շատերը կիսրատեն թէ, աւելի շատ անգամ, բայց քիչ ուտելու են, քան թէ մէկ անգամ և շատ։ Ըստ մեզ, պէտք է այս մասին սովորութենէն չխոտորիլ, եթէ զանազան պարագաներ արգելք չըլլան։ այսու ամենայնիւ յղութեան վերջին ամիսներուն մէջ, և երբ մարսողական գործարանին պաշտօնները, ստամոքսին և աղիքներուն նեղուելէն կխանգարուին, աւելի օգտակար է, շատ անգամ և քիչ ուտելն, և մանաւանդ երեկոյին ամենաթեթև կերակրով անցընել։

Հաղիւ պէտք է յիշել թէ, մայրական պարտաւորութիւններն, անթերի կատարել փափաքող կանայք, ընաւ իրենց տունէն դուրս, իրրև հիւր ուրիշ տուն, խնճոյքի կամ հարսնիքի երթալով կերակուր ուտելու չեն. նախ՝ որովհետև սոյն տեսակ ճաշերը սովորականէն աւելի կտևեն. երկրորդ՝ որովհետև խիստ դժուար է, մինչև անդամ ամենաժուժկալին, սովորականէն աւելի չուտել. երրորդ՝ որովհետև այնպիսի խնճոյքներ, հարսնիք կամ տօնախմբութիւնք, կարգէ դուրս և մարմինն անհանդիստ ընող զարդարանքներ, հագուստներ կպահանջեն. վերջապէս, յղի կանանց համար, խիստ վնասակար է ապահանելու օդ շնչելը։ Կերակրոց տաքութեան և պաղութեան վրայ, սա միայն կըսենք թէ, այս մասին պէտք է հետևին յղի կանայք իրենց ճաշակին և սովորութեանց։

ԵՐԿՐՈՐԴ

Յղի կանայք ի՞նչպես հագուելու են։

Յղի կանանց հագուստները պէտք է ըլլան, ինչ որ ըլլալու են ամէն կանանց, այսինքն այնպիսի ձև ունենալու են, որպէս զի որովայնը կամ կուրծքին վարի կողմը չնեղուին. յղի կանայք բնաւ նեղ հագուստներ հագնելու չեն։

Վնասակար բաներուն արգիլեալ է յղի կանանց. և այս ալ երեք գլխաւոր պատճառներու համար. որովհետև շնչառական շարժումները կնեղէ. որովհետև կուրծքին և որովայնին մէջ պարունակեալ անդամներուն տեղը կամ միջոցը կպզտիկնան, որ յղութեան առթիւ,

ւրդէն սովորականէն աւելի նեղցած է . վերջապէս , որովհետև , արգանդին մէջ օր ըստ օրէ մեծնալու վրայ եղողն , դէպի կուրծքն ըստ օրինի վեր ելլելը կարգիլուի , որով սովորական տեղէն ուրիշ տեղ տեղափոխելուն , ապագային մէջ հազարաւոր դէշութեանց աղբիւր պիտի ըլլան . խիստ ցաւալի է , քօռսէյի և նեղ հագուստի սովորութիւն ունեցողները տեսնել , որք ամէն կերակուր ուտելէ ետքը , կուրծքերնին թուլցնել ստիպեալ են : Ո՛նչ կրնայ ըլլալ , տղուն կանոնաւոր զարգացումն , այն քօռսէյի առթիւ . շատ անգամ խեղանդամ ըլլալու սերմը կստանայ : Ծոռնոց ձուերէն , դիտմամբ հրէշներ , յառաջ բերելու համար , զանոնք խիստ ուժով երերցնելուն կնմանի , կուրծքը և որովայնը քօռսէյով չափազանց նեղելն : Խիդոր Ճէօֆրոյ Սէնթ—Իլէռ (Պաղղիացի Ճոգեկաւոր Ընագէտ) դիտած է թէ , այս պարագաներու մէջ , տղոց գլուխները մանաւանդ կարդէ դուրս ձև և կերպարանք կառնուն . նոյնը հաստատած են նաև Ոլընէ և Տիւմա Պաղղիացի լրժիշկներն :

Եթէ չափազանց նեղելը միջասակար է , կակուղ և առաձգական գօտիով մը , միօրինակ և կանոնաւոր փաթթուիլը , ընդհակառակը , կ՚յարմարի , խիստ օգտակար կերպիւ , յղութեան վերջին ամիսներուն մէջ մանաւանդ նախորդ հիւանդոտ զանազան վիճակներու մէջ :

Ճոռվմայեցիք , աւելի գեղեցկութեան նկատմամբ , քան թէ առողջութեան , բօրբէ քօռսէյով մը կոկորդնին կսեղմէին . որոյ վտանգները քօռսէյի չափ չեն . ըլ եթէ քօռսէյով կուրծքը չափազանց նեղուի , կաթնատուութեան մեծ արգելք պիտի ըլլայ , կամ շնող կենսատու ստեանց զարգացումն արգիլելով :

Յղի կնոջ , հագուստի վերաբերեալ առողջապահութիւնը , մէկ բառի մէջ կ՚ամփոփի , լուծելով այս խնդրոյն բոլոր դժուարութիւնները . այն բառն է , ազատութիւն (ԵՒ ԻՆՉ ԲԱՆԻ ՄԻՋ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ ԵՒ ԱՂԷԿ ՉԻ) :

Իսկ բնակարանի գալով , սա միայն կրսենք թէ , յղի կանանց շնչած օդը միշտ մաքուր ու զով ըլլալու է . իրաւ է որ աղէկ և օգտակար է , յղի կանայք գիւղերն անցընել , սակայն ասի ամէն ընտանեաց կարելի չըլլալուն , աւելի օգտակար և մանաւանդ գործադրելին է վերի ըսածնիս . այսինքն , ուր որ ալ ապրին , պէտք է որ շնչած օդերնին զով ու մաքուր ըլլայ :

ԵՐԻՒՐԴ

Յղի կանայք աղեսպելո՞ն են կամ ոչ :

Յղի կանանց առողջապահութեան վերաբերեալ խնդրոյն այս կէտն ամենէն դժուարն է , որչափ որ ալ դիւրին կերեւնայ . մանաւանդ որ

և ամենէն կարևորն է որոշել, թէ յղի կնոջ համար, մարմնական կըթութիւնը թէ հանգիստ նոթեն է օգտակար։ Այս մասին բժիշկը մեծ պատասխանատուութեան տակ կմտնէ երբ իրեն խորհուրդ հարցուի, (որ խիստ քիչ անգամ կպատահի)։ Յղի բժիշկն այն դիւրութիւնն ունի հասկնալու թէ, առողջաբանական կանոն մը խրատելը, հիւանդին հիւանդութեանն օգտակար յարմար և պէտք եղած դեղագիր մը գրելուն չափ դժուար է։ Յղի այսպիսի սովորութիւններ, ընտանեաց մէջ ընդհանրացեալ չըլլալուն խորհրդածել կսիրէ։

Ընդհանրապէս մտածելով, կրնանք ըսել թէ, չափաւոր մարմնական կրթութիւն մը, յղութեան ամէն ամիսներու համար յարմար է. ախորժակը բաց պահելուն, արեան շրջանն և ջղային դրութիւնը կանոնաւորելուն, արգիլելով մանաւանդ որովայնի այն ծուլութիւնն, որ շատ կանանց համար, անտանելի անհանգստութիւն մ'է։ և որ շատ անգամ, զաւակ անցնելու պատճառ կըլլայ։ Այս կանոնը կխոտորի, միայն այն կէտերու մէջ, ուր մէկ կամ բազում նախորդ վտանգներ կսիրէ ղկին, քիչ կամ շատ բացարձակ հանգստութեան մէջ պահել, որով և կդատապարտէ անկողնին մէջ նստուկ ժամանակ անցընել։

Այլ այս հաշուէն դուրս են, շատ արիւն ունեցողները, ղե թէոր նոքա ևս նստուկ անցընեն, առաջքն առնելու աշխատած վտանգնուն մէջ կիյնան։ Այս ալ արդարև բժիշկին գործն է։

Մօռիսօ, Վաղղնացի բժիշկն, սկզբունք դրած էր թէ, յղի կանայք, պէտք չէ որ իրենց վերջին երկու ամիսներուն մէջ տեղէ շարժին, և այս վասն ալ բոլորովին երևակայական դէպքի մը վրայ հիմնած էր։ Վաղելը, վերոյիշեալ միջոցին, այսինքն յղութեան վերջին երկու ամիսներուն մէջ, ընդհակառակը, բոլոր բժիշկներէ խրատուած է իրրև միջոց զանազան յօդաւորութեանց կակղութիւն տալու, և միանգամայն գլուխը չափազանց տաքութենէ հեռի պահելու, որ ատեն արիւնը շարունակ և սովորականէն աւելի գլուխն կըլլելու ենթակայ է։ Կառտիէն, գիւղացի կանանց դիւրաբեռնութիւնը, նոցա մինչև ծնելու օրն աշխատաւոր կենաց կսատկացնէ։

Յղի չափաւոր կրթութիւնն օգտակար է, սաստիկ մէկէն ի մէկ շարժուններն, ընդհակառակը, խիստ վտանգաւոր է. ասոր համար է որ պարիլ, ճիգ, ցատկել, ծանր բեռ վեր վերցնել, ևայլն, շատ անգամ, զաւակ անցնելու պատճառներ են։

Խոկ ցամաքով կամ ծովով ճամբորդութիւնները, յղի կանանց յարմարելը կամ ոչ, ուրիշ առթիւ պիտի խօսինք։

ՉՈՐՐՈՐԴ

Ինչ կանայք է՞նչքա՛ն ժամանակ անջընելու են։

Ինդութիւնը, կանանց համար, խիստ զգոյշ կենալու վճռակ մ՚է։ Զի ջղային դրութիւնը, չափազանց գրգռութեան մէջ կմտնէ. երբեմն ալ իր ճաշակներն ու կենաց սովորութիւններն այնպիսի փոփոխութեանց մէջ կմտնեն, զորս պէտք է դիտողութեան առնել և ջոռնալ։ Երբեմն չափազանց ուրախութիւն մը, մեծ տխրութիւն մը, սաստիկ բարկութիւն մը, պատճառ կըլլան զաւակ անցընելու։ Ասոնք սովրելով հարկ չ՚ինար երկարօրէն խօսիլ թէ որչափ կարևոր է յղի կնոջ, հանդարտ կեանք մը վարել, հեռի ընկերական կիրքերէ, բարկութենէ ևայլն։

Յղի կանայք, ուրեմն, պէտք է ապրին հանդարտ. խնճոյք, տօնախմբութիւն, հարսանիք ևայլն, իրենց համար չեն. գաւալն է որ քաղաքավարական սովորութիւնք և պարտաւորութեան զգացմունք բաւական չեն ըլլար շատ անգամ հեռի կենալ ասոնցմէ։

Ի՛ժշկաց այս մասին, փորձառութիւնը կապացուցանէ թէ, Վիւղացի կանանց, յաճախ զաւակ անցընելու պատճառներն են, չափազանց աշխատութիւնն, իսկ քաղաքաց մէջ ընակող կանանց համար ալ բարոյական են պատճառներն, ինչպէս դիշեր լուսցնել, թատրոն, խնճոյք ընտանեկան վէճք ևայլն, չմոռնաք մանաւանդ կիրքերն ու ջղային դրութիւնը գրգռող գրոց ընթերցանութիւնը։

Ասոնց կվերջանայ յղի կնոջ ինչպէս սնանելուն, ինչպէս հագուելուն, ինչպէս ժամանակ անցընելուն վրայ ըսելիքնիս, զոր խիստ հաւմառօտ անցանք, զի զանազան առթիւ, դարձեալ այս ամենակարևոր խնդրոյն վրայ պիտի խօսինք. վերջինակ մեր շատ ընտանեաց մէջ, տգէտ դահէկներուն, նոյնպէս և դեռ դեղագործութիւնը կատարեալ չգիացող դեղագործներուն վրայ, որք անխոհեմաբար և չահասիրութեամբ բժշկութիւն ընել կ՚ամդգնին, — ասոնք, հասարակութեան համար, ամենէն կարևոր առողջաբանական խնդիրներ են, որոնց վրայ յաճախ պիտի խօսինք, զի բժիշկ կոչուելու և կրնանդ դարմանելու համար, բաւական չէ միայն դեղագիր գրել և կարգալ. այս կետերուն վրայ, այժմ չ՚երկարելով, ներկայ յօդուածովս, յղի կնոջ վրայ այսքան ընդհանուր տեսութիւն մ՚ընելով, կմնայ խօսիլ կաթնատուութենէն, և նորածին մանուկն ինչպէս մեծցնելուն վրայ, զորս պիտի հրատարակենք յաջորդ թուով։

ՀԱՏՈՒԱԾ

Ազնաբուսություն Հայոց Հնության*. —

3. Ընդհանուր ընկերություն յարաբերական կացության.

Ի՞նչ է, ուրեմն, մեր օրերուն ամենէն մեծ խնդիրը. հազիւ կհամարձակիմ կրկին անգամ արտասանել այս ատեանիս մէջ, այն բառը, զոր շատ անգամ չարաչար գործածուած է, բայց վերջապէս, լեզուիս նոյնպէս և կարծեացս մէջ հաւատարիմ մնալու համար, պէտք է կրկնել զանի, ըսել կուզեմ հանրապետութիւնը։ Ժամանակիս մեծ խնդիրն, որ բոլոր վեհանձն գլուխներն ու բարեգութ սրտերը կյուզէ, նոյն ինքն հանրապետութիւնն է, այսինքն բառին համեստ, ազատ, օրինաւոր և ճշմարիտ նշանակութեամբն առնելով, ըսել է, քաղաքական և հասարակաց ամէն տեսակ ազատութեանց զարգացումը, հասարակայ գործերուն տնօրինութեան և որոշման ամէն քաղաքացւոյ հաճութիւնն, և որչափ որ կարելի է այս աղքատ Աշխարհիս և մեր տխուր մոլորակին վրայ, Երկրին կառավարութիւնն իր Երկրացիներով ըլլալն։ Ահա, այս է, հանրապետութիւն բառին ճիշտ, պատուաւոր և յարգելի նշանակութիւնն։ Ա՜հ, ուրեմն, կհարցնեմ ինքզինքիս թէ, ի՞նչու համար հանրապետութիւն, այսչափ երկայն ատեն երազն պէս կմնայ, փոխանակ իրական վիճակն առնելու։ Ինչո՞ւ համար, — վասնզի Հանրապետութիւնն ընտանեաց վրայ չէն հիմները։

Աչ և ձախ, երկու սոսկալի վտանգ կայ, կարգին մէջ ազատութիւն և ազատութեան մէջ կարգ կազմելու համար. այս երկու վտանգներն են անհատականութիւնն և կեդրոնականութիւնն։ Անհատականութիւն, արդարև ընտիր և սրբազան բան. զի ծնունդ է անձնականութեան, որ ինձի միանգամայն արժանիք մը և պարծանք կուտայ, մարդ ըլլալուս։ Կեդրոնականութիւնը, նաև աղէկ բան, միշտ կարևոր բան, որովհետև ազգերն պահողն է. բայց կարևոր, մանաւանգ մեր մեծ ընկերութեանց, մեր նոր և մեծ միութեանց, որք չլուծուելու համար կեդրոնի մը մէջ դրուած, մեծ կարողութեան մը պէտք ունին։

Բայց անհատականութիւնն վտանգ մ՚ունի որ կկոչուի անիշխանութիւն, նոյնպէս և կեդրոնականութիւնն ալ վտանգ մ՚ունի, որ

*Տես Արևելք. թիւ 7. երես 237—241։

բռնակալութիւն կկոչուի · և ամէն անգամ որ , ազատութիւն մը ընտանեաց վրայ հիմնուած չէ ; անիշխանութեան դէմ պիտի երթայ դլուխ զարնէ , Հառիպտէն Վիլլա աստանդելով , վերջապէս բռնակալութեան մէջ պիտի գտնէ ինքզինքը · Ծնունդ պիտի առնու՝ ջախ-ջախեալ , առանց միութեան , առանց իշխանութեան , առանց ընտանեաց ազգ մը , յարաբերութիւն , հաղորդակցութիւն չունեցող անհատներ , ընկերական անապատին նուրբ փոշի մը , որ անկարող է բան մը շինելու , այլ միայն փոթորկի ատեն օդը բարձրանալու , կամ թէ , արեամբ կամ տիղմով իրար մօտենալով հաստանալու և կարծրանալու յարմար · — այս է ահա անիշխանութիւն ։

Յետոյ երբ վախկոտ ընկերութիւնը դէպի ետ երթայ , բացարձակ կեդրոնականութեան պիտի հանդիպի · և բացարձակ կեդրոնականութեամբ , թողունք անունը , թէ մէկ կամ թէ շատերու ձեռաց մէջ ամիռւի , թէ հանրապետութիւն ըլլայ , թէ միապետութիւն (զի դործը ձևին վրայ չէ) զի այն է միշտ վախճանն , եթէ մինչև վերջին սահմանն երթան , ժողովրդեան բոլոր աշխոյժ կարողութիւնները բռնաւորութեան ձեռաց մէջ պիտի իյնայ , որ զանոնք միացնելով կհեղդեղէ · ահա ասոնք են երկու վտանգներն ,

Ո՞հ , ուրեմն , ցուցուցէք ինձ , այս անուան արժանի ընտանիքներ , ընտանեկան հիմանց վրայ կազմեալ Ճշմարիտ Վիճակներ (քաղաքական ընկերութիւններ) · Հայր մը և մայր մը , թագաւորն և իր պաշտօնեայն ; միատեղ նստած , խումբ մը զաւակներ շուրջերնին առնելով , խօսելով նոցա պատիւ և պարտաւորութիւն , մտիկ ըլլուելու պայմանաւ , հնազանդեալ յարգանօք , մանաւանդ , և որ աւելին է ; սիրով ։ Ցուցուցէք ինձ հայր մը , թագաւոր իր տանը մէջ , և որ երբ տնէն դուրս ելլէ ; հրապարակին վրայ ազատ քաղաքացիի մը լայն ճակատով տեսնուի · և որքան ազատ դուրսն , այնքան կարող ըլլայ իր տանը մէջ ։ Ցուցուցէք ինձ ընտանիքներ և արժանի պիտի ըլլաք հրապարակներ ունենալու · ցուցուցէք ինձ պատուեալ հայրեր , միանգամայն կարող իրենց տանը մէջ , և այն ատեն արժանի պիտի ըլլաք ազատ քաղաքացիներ ունենալու բոլոր անիշխանութիւններու և բռնակալութիւններու մէջ ։

Ահա լուծումն քաղաքական ընկերութեան համար ։ Այնչափ յստակ և հաւատարիմ պիտի ըլլայ կրօնական ընկերութեան համար ալ ։ Այո՛ ; կրօնական այն ինդիրն , որ զմեզ մեր կենաց մէջ կշփոթէ և կգրգռէ , այն է թէ , ամենքնիս կամ գրեթէ ամենքնիս ալ Աստուծոյ կհաւատանք ։ Օ՛ի ես չեմ համոզուած , անշուշտ դուք ալ չէք , նոյնպէս , պարոնայք , թէ բոլոր Եւրոպայ , Անգղիա , Վերմանիա և

ուրիշ անհամար Քրիստոնեայ ժողովուրդք ամէնքն ալ անհաւատ ըլլան : Այսօքս մեր գրոց և օրագրոց համար չէ : Գրոց և օրագրոց մէջ կարդացուածները , մտացածին ընկերութեան վրայ վաղող երևակայական կրակներուն կնմանի , և ոչ թէ նոյն ինքն ընկերութեան հոգին և արձագանքն է :

Ո՞հ , ուրեմն , զմեզ յուզող խնդիրն է , թէ անհաւատութիւնը չէիրեր , բայց և այնպէս , կարող է . անբարոյականութիւնը գեռ Տիրուհի եղած չէ , բայց սահմանը կանցնի կոր , եթէ քիչ մ'ալ յարատևէ , ամէն ուրեք պիտի տիրէ : Ահա Աստուծոյ տէրութեան գործնական երկու վարդապետութիւնները : Ի՞նչ պէտք է ընենք մենք , բոլոր Եւրոպիոյ մէջ . ի՞նչ պէտք է ընել ժամ . ը այս դարուս մէջ , ինչ որ ալ ըլլան ուրիշ ժամանակի , և եթէ կուզէք ուրիշ տարբեր մը վարդապետութիւններն . ի՞նչ պէտք է ընել անհաւատութեան և անբարոյականութեան յարձակումները գործնական կերպիւ և ամենայն ուժով խորտակելու համար : Երկու Դպրոցներ (կարծիք) կան մեր , Քրիստոնէից մէջ : Առաջ խիստ բարեսիրտ Դպրոց մը կայ , որ կյառաջանայ և կըսէ . Ինաւ ճշմարիտ է , այլ աղատութիւն բացարձակ . զի Եկեղեցին կարող է , որովհետև իր հետն ունի սէրն ու ճշմարտութիւնն . ուրեմն սէրը թող խօսի . Արքարէները և Առաքեալները լռեն , Եկեղեցին թող քարոզէ , խրատէ , թող աղօթէ , և այն ատեն պիտի յաղթէ : Ճշմարտութիւնը մարդուս օգնութեան չկարօտիր . այս Դպրոցը , Պարոնայք , բարեգութ է , ըսի , և դարձեալ պիտի կրկնեմ թէ , երբ բաները այս ծայրը քաշկռտուին , արդիւնքը երևակայական ցնորք մը կըլլայ :

Մեւս Դպրոցն — որոյ լեզուն և դիրքն կըհերքեն երբեմն անոնք , որք ինձ նման կզգան , բայց և այնպէս սոյն Դպրոցն ալ մեծ ճշմարտութեանց վրայ հիմնեալ է . — ան Դպրոցը կըսէ մեզ , ճշմարտութիւն և ողորմածութիւն . բայց ապականեալ աշխարհի մը մէջ կապրիք , "միտք մարդոյ ի հնուսն չարին արձանացեալ է ի մանկութենէ" կըդոչէ Աստուածային բարբառն : Ընհատական մարդուն կատրողութեանց և միևչև ընկերական մարդուն , որ նոյն ինքն անհատական մարդուն վրայ պատուաստեալ է , ընկերական մարդուն փափաքներուն մէջ ; ճշմարտութեան , արդարութեան և ողորմութեան դէմ մաքառող մշտնջենաւոր ապստամբութիւն մը կայ : Օրութեան և համոզման հետ , պէտք է ուրեմն , Եկեղեցւոյ օգնական մը , պէտք է անոր առաջնորդող իրաւունք մը , պէտք է ձեռքը սուր , ինչ եղանակաւ որ ալ ըլլայ իր գործածութիւնն , և որովհետև Եկեղեցին ձեռքը սուր չկրնար տանիլ , պէտք է ուրեմն , վերջապէս , աշխարհական թևի մը միջամտութիւնը :

Ահա երկու Դպրոցներն, ահա իրենց նշանակութեան բուն իսկ խորն և իրենց հաւատարիմ լեզուն. երկուքն ալ իրենց շիտակ կողմն, ինչպէս նաև ծուռ կողմն ունին։

Երկրորդ Դպրոցին կհաճիմ, թէ, մարդս չար է. մեղօք ծնեալ, իր գոյութեան կողմերն ունի, որ լուսոյ դէմ կմաքառին։ Արդարև իր բնութեանը մէջ, որչափ որ ալ վատթարացեալ է, վհհանձն կարողութիւններ ալ կան, բայց և այնպէս խիստ զօրաւոր վատիքներ ալ կան, որք լուսէն հեռացնելով չարչոյն կմտերցնեն։ Արդս սիրելման հակամիտեալ է, և թէ որ զանի, ճշմարտութեան դէմ առ դեմ ձգես, զինքը պաշտպանող, առաջ մղող առանց դաստիարակչէ և պահպանիչ կարողութեան, մարդս, ընդհանրութեան վրայ խօսելով, աւելի չար պիտի ըլլայ, քան թէ բարի։

Ասոր կպատասխանեմ թէ, ի՞նչ կհօսիք սուրբ վրայ. ես եղածը կյարգեմ, երբ մարդուս սիրելմամբն եղածը Քրիստոնէական սահմանէն դուրս ելած չէ։ Անանք գործնական իրականութեան մէջ. բազմաթիւ դիպաց և օրինաց առթիւ, յետ այսօրիկ մարդուս կարողութենէն վեր, և Նախանամական յատակագծին համեմատ, վճռուած է թէ նոր խիղճն, իր կրօնական դաստիարակութեան մէջ, մարդկային կարողութեանց անչափահաս վիճակէն աղատուած է (խիղճն)։ Ո՞հ, ուրեմն, ես այս դէպքը կընդունիմ. վի ընդունելու համար մեծ և խիստ աղէկ կողմեր ունի. կյարգեմ դարուս աղատութիւնը, և կըսեմ թէ, Եկեղեցին պէտք է ունենայ, իրեն դէմ, կառավարութեան մի և նոյն եղանակն, ինչ որ հայր մը ունի, 30 տարեկան զաւկին հետ, որն որ զաւկին տասը տարեկան եղածին նման չէ։

Այն ատեն, ընտանեաց մէջ կտեսնեմ այն հայրն, որ է Եկեղեցւոյն ճշմարիտ աշխարհական օգնականն. այն որ կգործէ միատեղ դաստիարակութեան և լրացնելու պաշտօններն։ Ալ չմտածեր ոչ միայն, ինչպէս ազատ մտածողն, իր զաւկին խրատելու իրաւունք ունենալն, այլ միանգամայն բարոյականութիւնն անոր պատուիրելու, և որովհետև բարոյականութիւնը կրօնքէն անբաժանելի է, կրօնքն ալ պատուիրելու իրաւունքն ունեցած է։ Այն է ընտանեաց հայրն, իր արեան հետ, իր սերնդին բոլոր աւանդութիւններն փոխանցելու կարողութիւնն ունենալով, կարող պիտի ըլլայ նաև իր բոլոր իմաստութիւնը ժառանգ թողուլ, և ընել իրեն նման հաւատացեալ մը։ Ահա, մարդը, հայրն, որ կպարտաւորի դուրս ձգել ընտանեկան ծոցէն ապականիչ խօսակցութիւնները, ահա, հայրն, որ կպարտաւորի սիրով; ճշմարտութեամբ և երեսին ալ պէտք եղած առնն

պատժով մեծցնել այն երիտասարդ բարբարոսն, որ անոր ժառանգ Թողուց ապականեալ բնութիւնն, և պիտի ըլլայ լուսաւորեալ մարդ մը, Քրիստոնեայ մը, երբ Քրիստոնեայ Եկեղեցւոյն լուսոյն, ընտանեաց հայրն, Քրիստոնեայ և բարոյականի տէր, իր դաստիարակութեան հիմները դնէ։ Ահա, այսօրուան, Եկեղեցւոյն աշխարհական ճշմարիտ օգնականն։ Ահա այն միակ կարողութիւնն, ուսկից կրնայ խնդրել լուացումը։ և այս կարողութիւնը, ձենէ և ոչ մին, վստահ եմ, ընդունելու դժուարութիւն չպիտի ընէ։

Կրնամ հիմայ, պարոնայք, իջնել այս ատեանէս, այս ճառովս*; նիւթիս հորիզոնները ցուցուցի, և ապացուցի թէ անիշխանականութիւն չէ· ոչ, ոչ, 1866 այս թուականիս մէջ, ընտանեաց վրայ խօսիլն անիշխանականութիւն չէ։

Այսօր ամէն տեղ իրարու կհարցնեն մեծ շտապաւ և անձկանօք թէ ի՞նչ է մարդկութեան ապագան. հին Եւրոպան բոլորովին կաներևութանայ· ի՞նչ պիտի ըլլայ նոր Եւրոպան կազմողն. ես առանց երկդիմելու կպատասխանեմ թէ Ընտանիքը պիտի ըլլայ։

Ընտարակոյս, Վաշինգտոնի նման երկրի մը մէջ, Քլօվիսէն (Վաշինգտոնի առաջին տիրող Թագաւորը) սկսեալ, զինուորական երկրի մը մէջ, և որ չպիտի դադրի ըլլալէ այս ժամուս, չեմ ուրանար բանակաց կարևորութիւնը, բայց բոլորովին մոռցուած է թէ, բանակաց գերազոյն զօրութիւնն է բարոյական և դերբնական ուժ մը, զինուորաց հայրենասիրութիւնը, պարտաւորութիւնը, օրինապահութեան կրթութիւնը, անձնուիրութիւնն, և մէկ խօսքով, դիւցազուններ յօրինողն այն ամէն յատկութիւններն։ Ուրաչ է որ չեմ ուրանար, նոր կարգադրութիւններու կարողութիւնը, պատերազմի գործիքներուն մէջ, գործածելու համար հրաշագործ գիւտից արդիւնքը, բոլոր ասոնք չեմ ուրանար, բայց և այնպէս կըսեմ ալ թէ, աշխարհիս վերջնական ապագան բանակաց չէ, միշտ ընդունելու և բերրի յաղթութիւններն, ասեղնաւոր հրացաններուն և Նուէի թնդանօթներուն չէ. աշխարհիս ապագան, մարդկութեան յաղթութիւնն, աւելի բարոյական ըլլալ գիտցող ժողովրդոյն է, այն ժողովրդոյ, որը ոչ թէ բռնութեամբ, զօրութեամբ, այլ հասարակաց խղճի դաստիարակութեամբ, իմաստակներն ու պալատական կողմնակցութիւնները դուրս պիտի վանեն։ Խարոյականութիւն ունեցող ժողովրդոյ վերջապէս, այն ժողովրդոյ, որը բազմաթիւ ընտանիքներով, պարկեշտ ընտանիքներով, Քրիստոնեայ ընտանիքներով փրկչի մը սպասող Եւրոպայի պիտի երևնան։

(Հոս կվերջանայ Հայր Հիւակինթի առաջին ատենաբանութիւնը)։

---

*Տես թիւ 6 և 7· երես 197—237։

Տ· Մ· Ռ· Յ-ԻՒ-ՃԵԱՆ։

ՄԱՐԴՍ

ԵՒ

Ա՛րքունական , տրհնոպական , և զինագրական կարողութիւններըն*։

Կհասկցուի նաեւս թէ , ինչպէս գիտութեանց պտուղ եղող հրաշալից ներկայ հանդիսութեան մը առեն կարող եղած է Վաղղնացի Ղերական** մը , կատարեալ նախատեսութեամբ մը , և իր դասէն եղող շատերուն զգացմանց հակառակ , բարձրաձայն ըսել . " Տէր , դուք հրամայեցիք , ես ալ լեռները յարդեցի , ջուր և ցամաք դաշտերուն վրայ ձեռքերս տարածեցի , դաշտերն ալ հունձով և պտղօք գոյուեցան ։ Դուք հրամայեցիք , ես ալ կայծակը գերի առի , զանի մտացս մունետիկն ըրի (եկեքարիկն ու հեռագիրն ըսել կուզէ) ։ Ես եմ , այն տկար գործիքն , որ Ձեզմով , բոլոր այս մեծ գործերն ըրի ։ Ինութիւնը , զիս հազար անգամ ոչնչացուցած էր , իր կարողութեան բեռին տակ , երբ Ձեզմով , ինչ պոռաք կարող-ընկերովդ , նա իմ իշխանութեանս տակ չդնեիր ։"

"Իսկ այս Երկաթուղին , որոյ վրայ եկած եմ , քու օրհնութիւնդ տալ , և որ պիտի պատէ աշխարհս իր ամէն կողմերովը , բնաւ չար նպատակաւ հնարուած չէ ։ Ամէն բան պիտի մեծնայ , կայծակի նման թռչող այս կառքերուն միջոցաւ , որք կոչնչացնեն հեռաւորութիւնը , տանելով բոլոր ժողովրդոց միտքերը , գիւտերն ու ձեռագործներն ամէն մէկ աղգին , տանելով , մէկ ելոսքով , ընդհանուր աշխարհս , իր մասանց ամէն մէկուն մէջ"։

"Ազաջները , մարդկութեան գիրքը կարդալու համար , հեռաւոր և մանաւանդ վտանգաւոր ճամփորդութիւններ ընել հարկ էր ։ իսկ այսօր , ամենէն ռամիկը , նոյն գիրքին ամէն մէկ երեսներուն իրեն առջեւէն անցնիլը պիտի տեսնայ ։ Կարող պիտի ըլլայ , եթէ ուզէ , նստիլ ամէն տեղ , տեսնել ամէն լոյսերը , ընդարձակել իր գիտութիւնն , աւելի աղէկ հասկնալ իր կեանքն , և ճաշակել բոլոր այն կերակուրները , զորս Աստուած դրած է , Ստեղծագործութեան սեղանին վրայ , առատօրէն և անխտրաբար ։ Այս շուտ և սքանչելի փոխոխութեանց դէմ , մարդկային աշխուժութեան այս աճման դէմ , չվախնանք բնաւ , թէ բարի սովորութիւնք , կրօնք , Ասյն , կիրթ հոգին

---

*Տես Ակլեկիա · թիւ 7 · երես 251 ։

**Փարիզի մօտ , նոր երկաթուղիի մը հիմնարկութեան առեն , ըրած ատենաբանութեան մէջ ։

և կոկաթան ։ " ՄԵԾ ՄԻՏՔԵՐԸ ՄԵԾ ԲԱՆԵՐՈՒ ։ (գործերու) ՀԵՏ ՍԵՐԹԱՆ ։"

Ճանաչել , այս է ահա մարդուս պայմանն , ահա այս է իր արժանութիւնն , իր փառքն , իր երջանկութիւնը , բարօրութիւնը , վեհանձնութիւնն և իր անկախութեանն , ազատութեանն ապահովութիւնն ։ Այս է ահա , մէկ խօսքով , իր անձին ու Ինութեան տէր ըլլալու միակ միջոցն ։ Այս նկատմամբ , ինչ որ ալ ըսին շատ քաղաքագէտ գլուխներ , որք կրնաւրաբէին գիտութիւնը պոպոչական վիճակի մէջ դնել , պէտք է երախտապարտ ըլլալ բոլոր այն աշխոյժ հոգիներուն , որք իրենց նախնեաց և ժամանակակիցներուն նախապաշարումները ջնջելու աշխատելով , գիտութիւնն ըստ ամենայնի յառաջացնելու ճամբու մէջ դրին ։ Անշուշտ ամէն որոշեալ վիճակ և կացութիւն , իր գոյութեան իրաւունքն , ինչպէս և իր պահպանութեան օրինաւոր իրաւունքն ունի . բայց որչափ որ ալ յարգելի և սրբազան ըլլան սովորութիւնք և օրէնք , մարդս ստիպեալ , դատապարտեալ չէ զանոնք անփոփոխ պահել ըստ աւանդութեան , գտածին նման ։ Այն տեղ , այս նկատմամբ , բացառեալ մէկքանի ընկերական կարևորութենէ , դաստիարակութիւնը սխալ կերպով առաջնորդուելով է որ մեծ խոչընդոտներ ծնունդ առած են մեր հարազատ յառաջադիմութեան և զարգացման ։ Արդարև այն ժամանակներուն , ուր ծընունդ կառնուն լի նուանդեամբ և աշխոյժ գլուխներ , որք ընդդէմ ամէն տեսակ խոչընդոտից և Նախահնամական օրինաց , ժողովուրդներն իրենց թմրութենէն արթնցնելով , թէ լեզուով և թէ գործով , մարդուս կազմուածքին և բնութեան մէջ գտնուած ֆիզիկական , իմացական և բարոյական կարողութեանց յարմար ապագայ մը կպատրաստեն ։ Այս ինչպէս որ ժամանակակից գրագէտ մը ըսած է թէ , Ձկայ նոր կարծիք մը , գաղափար մը , որ ընդունելէն առաջ , հազար ու մէկ վէճերու , բամբասանաց և գժտութեանց տեղի չտայ ։ Փառք , ուրեմն , և խրախոյս այս տեսակ Թանկագին և բարեսիրտ տաղանդներու ։ Անոնք ոչ միայն այն թուլացեալ ընկերութեանց , Երկրի ճշմարիտ աղն եղած են , այլ միանգամայն , իրենց քաջութեամբն ու հաստատամտութեամբը , ճշմարիտ վերականգնողներ ։ Այո , մեր գոյութեան տէր ըլլալնիս ճանչցուցած են , և ցուցուցած են բնութենէն ընդունած բոլոր կարողութիւններն երևան հանելով զանոնք նախ իրենց վրայ , ինչպէս քաջութիւնն , արժանաւորութիւնն , իմացականութիւնն , անձնուրացութիւնն , յոյսը , մարդասիրութիւնն և հաստատամտութիւնն ։ Իրենցմէ և ոչ բան մը պակսած է սակայն ժողովրդոց , Թէ ինչպէ՞ս , մարդս , Աստուածու-

թեան միակ ձիրքով մը, կարող է իր մեծութիւնն երևան հանել և ձեռք ձգել ազատութիւնը։

Ոմիքաղդաբար, հինէն մնացած նախապաշարումներն, որոնց դէմ մաքառիլ ստիպեալ ենք մինչև այսօր, ամէն ոք ինքզինքը գիտնական կկարծէ. և այս երևակայեալ ցնորքին հետևութեամբ, ամէն ոք իրենց կենաց կազմութեան, ինչպէս նաև իրենց նմաններուն կազմութեան վրայ բոլորովին տգէտ կմնայ։ Ասի կվերաբերի մանաւանդ առնոց, որք քիչ շատ դաստիարակութիւն առած են, և որք իրենց ժամանակակիցներէն աւելի լուսաւորեալ են։ Ասոր այն գիտնականներն իրենց վրայ կչափազանցեն. կերևակայեն ըլլալ ինչոր մարդ մը կրնայ ըլլալ, որովհետև այս կամ այն գիտութեան վրայ միայն մը ինչ գաղափար մ'ունին։ Ասնշուշտ, խիստ պատուաւոր և փափաքելի է ըլլալ ճարտարապետ, մեքենագործ, աստղաբաշխ, երկրաչափ, քահանայ, դատաւոր, բժիշկ, իրաւաբան, մարաջախտ կամ տերութեան պաշտօնեայ։ Երբ այս անուններէն մին ունենայ մէկն, իրաւունք կունենայ իրմէ գոհ ըլլալ. բայց կրնայ բոլոր աստոնց հարցնել թէ, ի՞նչ չարաբերութիւն կայ ձեր գոյութեան բացարձակ և ազատ եղանակին, ձեր իմացական, մանաւանդ, առանձին արտայայտութիւններուն մէջ, որոնց մէջ բոլորովին ինքզինքնիդ կկորսնցնէք, և որոնց համար այդչափ կհպարտանաք։ Ո՞նչ չարաբերութիւն կայ, կըսեմ, ձեր բնութեան, ձեր մտայ այն կտորին, և մարդկութեան կենաց և ընդունած բարձրագոյն և բաղմաթիւ ձիրքերուն մէջ. որ է հոս, ուրեմն, ստեղծագործութեան թագաւորն. ի՞նչ. դուք ձենէ գոհ էք, և իբրև ճշմարիտ տղայ ձեր իսկական կենաց վրայ տգէտ էք. չէք գիտեր թէ ի՞նչեր կպարունակին ձեր հոգիներուն մէջ. կապրիք մէկ քանի չօժարութեանց կոյր և գրեթէ ինքնաշարժ նշանակութեան, մէկ քանի զգացողութեանց խանձեալ աշխուժութեան մէջ, և բոլոր ձեր միւս կարողութիւնները տկարացնող կամ ոչնչացնող մէկ քանի տաղանդներու, գիտութեանց հպատակութեան տակ։ Ասու երբ այս եղանակաւ ինքզինքնիդ այսպէս չէզոք կընէք, որովհետև չէք տար բնութեան, ինչոր իրմէ ընդունած էք, դատաւորական կերպարանք մը առած կկարծէք և ինքզինքնիդ ձեր տեսակին կիսաստուածներ ներկայացուցիչներն ընդունել տալ կուզէք։

Ասնկատար մարդիկ. ձեր իմացական կարողութեանց լուծումն ըսէք, գործածեցէք անոնց լոյսերը, տեսէք թէ ի՞նչ բանի կկանչեն ձեզ։ Ասու եթէ կուզէք միանգամայն խորհիլ, պահպանութեան ձեր բնական դրդմանց և բարոյական զգացողութեանց կենաց և կրթութեան վրայ ձեզ ըսածներուս վրայ, շուտով պիտի տեսնէք ինչոր

ձենէ կպակսի , կարծած բարձրութեան հաւասարելու · ձեր իմացական պակասութեանց մէջ պիտի տեսնէք ինչոր ձենէ կպակսի ձեր կազմուածքին համեմատ ըլլալու , մարդուս կենաց համաձայն ապրելու , բոլոր աչաց ցուցունելու թէ դուք , ձեր տեսակին անուններն , որպիսութիւնները , կարողութիւնները կժառանգէք . թէ զանոնք կհասկընաք , թէ զանոնք կգործածէք , և թէ կվարուիք օր մը ընաւ ձեր գոյութենէն չժգոհելու , որչափ որ ալ կարճատև ըլլայ (կենաց տեւողութիւն) : Ապրիլն , ինչպէս որ խիստ իրաւամբ ըսած է Արիստոտելեան փիլիսոփայն (Ար · Ար · Ռուսօ) , շնչելը չէ , այլ գործելը · մեր անգամներուն , մեր զգայարանաց , մեր պահպանիչ բնական դրդմանց , մեր բարոյական , իմացական կարողութեանց , և մեր գոյութեան զգացողութիւնը տուողք բոլոր մասանց գործածութիւնն է : Ապրիլն , Աստուծոյ կամաց համաձայնիլն է , որ ոչնչի համար բան մը ըրած չունի : Իր օրէնքն իր շնորհաց ամէն մէկին մէջ գրուած է · զգայարանքները տրուած են իբրև գրունք հասկըցողութեան . բնական դրդումները կեանքն ապահովելու համար . զգացողութիւնները , իր անձը մեծցնելու , և իմացականութիւնն շրջանները մեծցնելու և իր լոյսը հոն ցոլացնելու : Ո՞նչ կենդանակէին բնութեան բոլոր այն ազատութիւնները , հարստութիւնները , առատութիւնները , հրաշքներն , եթէ զանոնք առանց գործածութեան թողէինք : Ինքզինքնիս մեր ձեռօքը մեռցնել չէ՞ մի · — պահենք , ուրեմն , ինքզինքնիս , քաջ և կարող մեր յաժարութեանց աշխուժութեամբը : Հանդիսատես ըլլանք մեր զգայարանքներովը տիեզերիս տեսքին , մշակենք մեր իմացականութիւնը , բանանք մեր հոգին մեր նմանեացը , զարգացնենք մեր բոլոր կարողութիւնները , և ցուցունենք մարդս , մէկ խօսքով , իր կազմուածքին բոլոր կողմերովը : Հատ տարիներ ապրող մարդը չէ որ կեանքն զգացած է , այլ այն որ աւելի կատարելապէս , պատուաւոր կերպիւ և աւելի բարոյապէս անցուցած է · այնպիսին եթէ հարիւր տարի ալ ապրի , աւելի աղէկ էր երիտասարդ գերեզման մտնել , փոխանակ այսպէս ապրելու :

Արդարև , մարդիկս , ընկերական աշխարհին մէջ ապրելու համար ստեղծուած չե՞նք մի : Այո , ուրեմն , ո՞նչ պէտք է ընել ասոր համար · հոս ալ նոյնպէս , պէտք է աշխատիլ , ընկերութեան մէջ մտնել , մասնակից ըլլալ , իր բաժինը տալ , ձեռքը դարուս ձեռաց մէջ դնել և յառաջ երթալ գլուխն ու կուրծքը դէպի վեր , ի յաղթութիւն գիտութեանց և ազատութեան : Ո՞ն ուրեմն , գործեսցուք , և չըսենք , թէ մէկ մը եւս , մէկ մը պակաս աշխատող ըլլայ · զի ամենքնիս ալ , մեծ և պզտիկ , իր պաշտօնն ու գործն ունի յառաջուց սահմանեալ · այս պայմանաւ միայն մարդ ըլլալը կպատուցուի և կրնայ ըսուիլ թէ իր պարտքն ու պաշտօնը կատարած է :

Հ. Տրոմաճկեան :

ՄԱՍՆԱՒՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՑ Ի ԵՆԱՀԻ ։

Ձենք կարծեր թէ, գտնուին Հայեր, որք դեռ չլսած և չկարգացած ըլլան, Եւրոպիոյ զանազան Ազգաց մէջ, օր ըստ օրէ աւելցած բազմատեսակ Ընկերութիւններն, որք նշան են նոյն Ազգաց թէ նիւթական և թէ բարոյական զարգացման, և հետևաբար աղբիւր են յառաջադիմութեան. բայց համոզուած ենք թէ, Ազգայինք, դեռ չեն ճանչցած Ընկերութեանն օգուտն, որովհետև ոչ միայն, մեր մէջ, Ընկերութեանց թիւը պէտք եղածին չափ չաւելնար, այլ մանաւանդ և յաւալին այն է, թէ սկզբանէ ի վեր հիմնարկեալ Ընկերութիւնք չեն յարատևեր. — եթէ օրինակ բերել հարկ ըլլար մեր այս ըսածին ճշմարտութիւնն ապացուցանելու, պէտք էր, բոլոր Ընկերութեանց անունները մի առ մի, հոս դնել, զորս աւելորդ կհամարինք, ամենուն գիտցած բանն ըլլալուն. մենք մեծ ցաւ կզգանք այս տողերը գրելու ատենիս, որովհետև երբեմն Վաղղիա գտնուած ժամանակիս, տեսած ենք բազմատեսակ Ընկերութիւններ, որք դարերէ ի վեր կյարատևեն, ամէն օր հարստանալու վրայ ըլլալով։

Համոզուած ենք թէ, սոյն Ընկերութեանց յարատևութեան պատճառն, ոչ թէ նոյն Ընկերութեանց անդամակցաց Վաղղիացի կամ հարուստ ըլլալնին է, որովհետև գործը Վաղղիացի կամ Ընգլիացիութենէն կախում չունի, այլ կամքէ և հաստատամտութենէ։

Ալլևկիոյ առաջին թուով*, Ընկերութեանց օգտին վրայ բաւական խօսած, մանաւանդ մէկ քանի օրինակներ ալ յառաջ բերած ըլլալով, չեմ ուզեր այս անգամ նոյնները կամ անոնց նման ուրիշ օրինակներ աւելցնել։ Այլ ուրախութեամբ սրտի կհրատարակենք հետևեալը, զոր ընդունած ենք Նաշէ. կգովինք Նաշի մեր սիրելի Ազգային Ազգայիններն, որք իրենց նորակազմ Ընկերութեամբն, ոչ միայն գովելի են իրենց համար, այլ ուրիշ գաւառաբնակ Ազգայնոց ալ բարի օրինակ հանդիսանալովնին, ընդհանուր Ազգին շնորհակալութեան արժանի։ Նաշու Ազգայինք, մեզ հետ երախտապարտ ըլլալու են Մեծապատիւ Ս. Վարագաշեաններու, Աստուածատուր Պալասաններու, Լ. Սըրմագաշներու, և ասոնց նման ազգասէր, Նաշու Ազգայնոց յառաջադիմութեան պաշտպան Նաշաբնակ Ազգայիններու (որոնց անունները չգիտնալնուս չհրատարակեցինք). և այսպիսի բարեսիրտ և Ազգասէր Ազգայինք խրախուսելու համար, Նաշու Հայեր, պէտք է սիրով միանաք և միութեամբ յառաջ տանիք Ձեր

*Տես երես 10։

նորակազմ և բարենպատակ Ընկերութիւնը։ — Համոզուեցէք, որ ամէն բան պզտիկէ կմեծնայ։ Հինգ մը որքան որ ալ մեծ ըլլայ, նախ մէկ քարի մը կտորէ կսկսի։ — Հազարաւոր գումարներ, միլիոններ, դարձեալ, նոյնինքն, բանի տեղ չդրուած, դէպէն կսկսի, և դէպէն կկարօտի։ — բանտաւոր էք։ ձի ուսումնասիրութեամբ, հայրենասիրութեամբ և մարդասիրութեամբ վառուելով սրտերնիդ, ծնունդ տուած է Ընկերութեան կազմութեանն, և ձի Ընկերութեան Տնօրէնին և Անմահակուացը պէս ակնածելի և Ընդհասէր անձինք ձեր մէջ կգտնուին։ բաղում յարգութեան արժանի է ձեր ընտրութիւնն, որով այն անձնանուէր անձանց բարեմասնութիւնները լաւ ճանչնալով, միանգամայն իրենց իրաւունք կընէք, և ձեր օգուտն յաջողութեամբ յառաջ կտանիք։

Ուրդարև, Նաշու Հայեր, խիստ վսեմ գործոյ մը ձեռնամուխ եղած էք դուք։ յարատևեցէք, ուրեմն, և Երկնից օրհնութեամբն ու պաշտպանութեամբը պիտի արդիւնաւորի ձեր վաստակը։ պիտի պսակուի ձեր աշխատութիւնն, և պիտի ըլլաք բարի օրինակ ամեն Հայոց։ ուրեմն, դարձեալ կըսեմ, ԵՂԻՔ ՀԱՍՏԱՏԱՄԻՏ ԵՒ ՅԱՐԱՏԵՒԵՑԻՔ։

ԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐ 1։

Պատրաստելքս նկատելով թէ Եւրոպայի քաղաքականացեալ ազգերը ընկերութեանց միջոցներով թէ նիւթական և թէ մտացական մասին հնչայաքայլ յառաջադիմութիւններ կընեն, և գրեթէ լուսաւորութեան ծայրն հասած են։

Նկատելով որ Կ. Պոլսոյ և Տաճկաստանի գաւառաքնակ մեր Հայ եղբարքն ալ ընկերութեանց միջոցներով քանի մը տարիէ ի վեր սկսան մեծամեծ յառաջադիմութիւններ ընել և լուսաւորութեան բազմաթիւ ապացոյցներ տալ։

Նկատելով որ այսօրուան ազատ Սահմանադրութեան շնորհիւն, ընկերութեանց կենսական սկզբունքն երկրիս մէջ ալ մտած է, և այսօր քաղաքիս մէջ շատ ընկերութիւններ կազմուած են։

Նկատելով որ մեր ազգային սէրն, կրթութիւնն և լեզուն օր ըստ օրէ կտկարանայ և կխափանի։

Նկատելով որ մեր դպրոցէն ելած տղայոց շատերը՝ ուսումնին առաջ տանելու միջոցներու պակասութենէն շատ տաղանդներ կկորսուին։

Նկատելով նմանապէս որ մեր Հայ արհեստաւորաց մէջ կրնան

գոնուիլ այնպիսի անձինք, որոնք իւրեանց առժամանակեայ հարկաւորութեանը համար պէտի դրամագլխոյ մը պակասութենէն մեծ շահ կրնան կորսուանել.

Նկատելով վերջապէս որ ազգային ընկերութեան մը կազմութենէն ոչ միայն առանձին և մասնաւոր օգուտներ կրնան յառաջ գալ, այլ նաև լուսաւորեալ և օգտակար ժողովուրդ մը կրնամք հաստատուիլ երկրիս տիրող ժողովրդեան առջև և մեզ արժանաւոր յարգանքն ստանալ.

Այսպիսի նկատմանց վրայ, այսօր հազար ութ հարիւր վեցասունը եօթին, Նոյեմբերի ամսոյն 23ին գումարուելով որոշեցինք ընկերութիւն մը կազմել «Նաշու ԱԶԳԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ անունով, որոյ նպատակն լինի,

Ա. Հրատարակել ազգասիրական ոգին Նաշու Հայ Հասարակութեան սրտին մէջ.

Բ. Ընտանեցուցնել ժողովրդեան մէջ Հայկական և Օսմանեան լեզուագիտութիւնն, իբր հաւասար հարկաւոր և պարտաւորեալ Հայոց համար.

Գ. Ուսկսնել Նշետարանի և Նոաքելոց թուղթերուն իմաստը, ջանալով արմատախիլ անել աւելորդապաշտութիւններն և կրօնամոլութիւնները.

Դ. Պաշտպանել աղքատ ուսանողաց յառաջադիմութեամբ մրցողներն, օգնելով նոցա հարկաւոր եղած գրքերով և գիտութով, ուսումնին առաջ տանելու համար, և

Ե. Դրամական օգնութեամբ հասնիլ Հայ վկայեալ արհեստաւորաց, ըստ Ընկերութեանս կարողութեանցն:

Հայս նպատակաց գործադրութեանը համար Ումանաժողով մը կազմեցինք երեք անդամներէ բաղկացեալ, որ են. Հրդեհ Պ. Յակոբ Վարագաշեան Նշենապետ. Հրդեհ Պ. Լուսիկ Սրմագաշեան Նշենադպիր, և Հրմանապատիւ Շիշմովեան Տ. Մեսրոպ Վահանեան Նայ Վանձապետ: Սոցա ընտրութիւնն մէկ տարուան համար է, և այժմ առաջին գործերնին պիտի լինի Ընկերութեան առժամանակեայ կարգադրութիւնն յօրինել, համեմատ վերոյիշեալ նպատակաց:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Մկրտիչ Տէր Սահակեան. Սահակ Մահտեսի Յակոբեան. Մկրտիչ Խաչիկեան. Մելիքսէթ Սարգսեան. Ղազար Ջուլֆեան. Սարգիս Գրանիոլեան:

ԱՆԴԱՄՔ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՍ

Խաչերես Գաբրիելեան. Լուսիկ Սրմագաշեան. Սիմէոն Քահանայ Հիշովեան:

ՌՕՄԱՆԻԱ
ԸՋԳՈՒՄԲԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅՑԱՑ ԵԿԵՂԵՑԻ
Համար 29—39
Փետրուար 6 · 1868

Նաշ

Մեծապատիւ Տէր

Ուրբաթ պիտի ուրախանային արդեօք մեր նախնիքն որոնք մինչև իւրեանց կեանքն անգամ զոհեցին ազգին լուսաւորութեան և Հայրենեաց համար, եթէ այսօր կարելի լիներ նոցա ողջանալ և ազգային յառաջադիմութեան և միաբանութեան եռանդն տեսնել։ Այո՛, մեր այն բազմերախտ նախնեաց ոգիքն թող երկինք մխիթարուին և իւրեանց սուրբ բերանովն օրհնեն իւրեանց թոռունքն, քանզի Հայք որևիցէ երկրէ կամ տեղէ ազգային ցրուեալ և խեղճ վիճակն մօտանց դիտելով սկսան միջոցներ փնտռել նորա կենդանութեանը և բարօրութեանը համար · — Ըպրի՞ն ուրեմն, և իւրեանց պապերուն արժանի որդիքն լինին։

Մեր Ազգն իւր սեպհական իշխաններէն և ազգային տէրութենէն զրկուելէն յետոյ, ուշ իմացաւ որ այս խեղճութեան պատճառն և չարեաց աղբիւրն մի միայն փիլիպոս-ինն էր։ Ուստի այս խըլըրտացեալ ախտին դարման մը տալու համար, սկսան աշխարհիս շատ կողմերը կարգաւորեալ վարժարաններ բանալ, օգտակար գրքեր, օրագիրներ հրատարակել և այլն։

Իսկ Տաճկաստանի Հայերն և մանաւանդ Կ · Պոլսեցիք, այս վերջի տարիներս այնչափ աղէկ հասկըցած են թէ ազգային կենդանութեան միակ միջոցն ծաց լուսաւորութիւնն է, որ ամէն թաղի և ամէն գիւղի մէջ վարժարաններ կբանան թէ տղոց և թէ չափահաս մարդկանց համար, և այն վարժարաններուն յառաջադիմութեան և ուսանողաց նպաստելու համար, ընկերութիւններ կազմեցին, ոչ միայն արք, այլ և կանայք իւրեանց մանաւոր ընկերութեան դրամովն աղջկանց վարժարաններ, որբանոցներ և անկելանոցներ բացան։ — Մեծ յոյս երջանիկ ապագայի մը։

Ծաց լուսաւորութիւն ուրեմն, Մեծապատիւ Տեարք, այս է միակ դարման ազգային կենդանութեան, այս է աղբիւր ազգասիրութեան, բարեսրտութեան և խղճի ազատութեան · և սոցա արծարծ-

ման միջոցներն են ալֆաբետները, ընկերութիւնները, յաղթութիւնն և օգտակար հրատարակութիւնները։

Արդ՝ նաշու Հայ հասարակութենէն մէկ քանի անձինք այս կողմերուս ազգային սերնդեան օր ըստ օրէ վատթարանալն մտանց դիտելով և նոցա բարօրութեանը համար միջոցներ փնտռելով որոշեց ընկերութիւն մը կազմել, որպէս զի այս միջոցաւս ստէպ մէկմէկ տեսնելով և ազգային կարօտութենանց վրայ խորհրդակցելով, վարժուինք աւելի եռանդեամբ հասարակաց բարեացն մտածելու և նորա բարօրութեանը համար աշխատելու։

Ուստի անցեալ Նոյեմբերի 23 ին իրիկունն Արդ. Պ. Սըմադաշեան Լուսիկին տունը ժողովելով, այժմեան ընկերութեանս հիմն դրուեցաւ, որոյ Մանաժողովն ալ կազմուեցաւ երեք անդամներէ բաղկացեալ, ստորագրելոցս Ընտենապետութեան պատիւն տրուեցաւ. Արդ. Սըմադաշեան Լուսիկին Ընտենադպրութեան և Արժանապատիւ Հիլթուվեան Տ. Մատիաս Վահանային Դանձապետութեան։ Ուստի այժմ համեմատ կանոնադրութեանս 13 երորդ յօդուածոյն, Մասնաժողովս հինգ անդամներէ կըազկանայ, որք են. Ստորագրեալս Ես. Գարագաշեան Ընտենապետ. Արժանապատիւ Հիլթուվեան Տ. Մատիաս Վահանայ Փոխ—Ընտենապետ. Արդ. Սըմադաշեան Լ. և Օհննէսեան Եսայեաս Ընտենադպիրք, և Արդ. Ղազարեան Մկրտիչ Դանձապետ։

Ես որպէս զի պատճառներն և նպատակներն օրք յորդորեցին զմեր հասարակութիւնն ընկերութիւն մը կազմելու ձեռք զարնել՝ Ձեր Գարգութենանց ալ յայտնի լինին, պատիւ ունիմ, Մեծապատիւ Տէր, կցորդել այս տեղ ներս հիմնադրութեան առաջին արձանագրութիւնն, աղաչելով միանգամայն բարեհաճիլ ծանուցանել բոլոր պատուական հասարակութեանդ, և յորդորել որ քաղաքիդ մէջ ալ կազմուի այսպիսի ազգային ընկերութիւն մը, որոյ նպատակն լինի հասարակաց օգտին և յառաջադիմութեանը համար աշխատելու։

Եթէ քաղաքիդ մէջ գտնուին անձինք, որունք մեր ընկերութեան անդամ գրուելու բարեհաճին, ընկերութիւնս պատրաստ է սիրով ընդգրկել այն մեծապատիւ անձինքն, ինչպէս որ արդէն ուրիշ այլեւայլ տեղերէ ունի ընկերագրուած անդամներ, որոյ համոզման համար, պատիւ ունիմ ընկերագրեալ բոլոր անդամոց ցուցակն ալ կցորդել։

Բարեհաճեցէք Մեծապատիւ Տէր, ընդունել Ձեզ։

(Ստորագրեալք) Ընտենապետ Ես. Գարագաշեան։

Ընտենադպիր Ես. Օհննէսեան։

ՅԱՒՅԱՒ

ԵԶՈՒԻ ԱԶԳԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱՑ

ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ·

Մեծ՝ Աբրահամեան Յովհաննէս·
,, Աղթընեան Սարգիս·
,, Աղաճանեան Ալ՝արդան·
,, Աց՝ Ալթինայեան Դրիգոր·
,, Աղաճանեան Պետրոս·
,, Դալստեան Կարապետ·
,, Դարագաշեան Յակերես·
,, Դրիգոր Դրանխոլեան Ղասպի
,, Դարագաշեան Դրիգոր·
,, Դրիգորեան Մուրատ·
,, Դրանխոլեան Կարապետ·
,, Դրանխոլեան Սաղոմոն·
,, Դանիէլեան Դանիէլ·
,, Դրանխոլեան Յովհաննէս·
,, Օհաննէսեան Յակերես·
,, Խաչիկեան Ակրտիչ·
,, Կարապետեան Ե՝՛ծատուր·
,, Մհի՛, Յակովբեան Ոսկի՛ւ
,, Մհի՛՛ Յակովբեան Խաչիկ·
,, Մատթէոսեան Կարապետ·
,, Մինասեան Եփրեմ Վհկ·
,, Մխքայէլեան Տօնիկ·
,, Մաղըմեան Եփրեմ·
,, Մհի՛՛ Յակովբեան Սահակ·
,, Մըսրըեան Յովսէփ·
,, Մինասեան Ե՝՛ծատուր·
,, Մոյսեան Տօնիկ·
,, Յարութիւնեան Ըհտիք·
,, Յարութիւնեան Յարութիւն
,, Յովսէփեան Ըթգար·
,, Յարութիւնեան Ակրտիչ·
,, Յարութիւնեան Ալ՝արդերես
,, Ճիլթովեան Մուրատվհկ
,, Ոսկանեան Պաղտասար·
,, Պաղտասարեան Դրիգոր·
,, Պապիկեան Կերսէս·
,, Պողքովու Յովհաննէս·

Մեծ՝ Պալասանեան Ե՝՛ծատուր·
,, Պաղտասարեան Ղևոնդ·
,, Պէլատուրեան Կերսէս·
,, Ջուլաքեան Ալ՝ազար·
,, Ջուլաքեան Ակրտիչ·
,, Ոսպէրտ Տիգրան·
,, Ոսպէրտ Ակիլ·
,, Արմագաշեան Լուսիկ·
,, Մուրատեան Ըռաքել·
,, Մուրատեան Խաչիկ·
,, Սարգսեան Մէլքիսէթ·
,, Սոգոմեան Դրիգոր·
,, Մուրատեան Թադէոս·
,, Մուրատեան Սահակ·
,, Տէր Սահակեան Ակրտիչ·
,, Վհկլալը Օ· Մինաս·
,, Փոփուճիչ Մէլքիսէթ·

Ֆ· Ֆրանսա

,, Ըլազեան Յակոբ՝·
,, Փոփուճիչ Դրիգոր·

Ռուսաստան

,, Պալասանեան Վասիլի·

Պարսկաստան

,, Խաչիկեան Յովհաննէս·
,, Ալազարեան Դրիգոր·
,, Ա՝անիցալը Դրիգոր·
,, Յարութիւնեան Ըհտիք·
,, Մուրատեան Ե՝՛ծատուր·
,, Մուրատեան Խաչիկ·
,, Ֆօքշանցի Խաչիկ·

Թէհրան

,, Պալասանեան Վասպար·

Պօլոժեն	Մեծ՝ Կարագաշեան Կրիգոր.
Մեծ՝ Դաժոգարեան Յարութիւն.	,, Սրուեան Ըստուածատուր.
,, Մրըշեան Ստեփան.	Պեսոպոլե Ռոմոյ
Պեսոպոլե Մոլտավիյ	,, Ջելաքեան Կարապետ.
,, Ընուշեան Յովհաննէս.	,, Օհանեան Նշայի.
,, Խրունգուլեան Յովհաննէս.	,, Օհանեան Մկրտչել.

ՄԱՍՆԱՒՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՅԵՐՋՆԿԱՅԷ.

Հետևեալ նամակը փութով և մեծ ուրախութեամբ կհրատարակենք, և առիթիս կծանուցանենք, մանաւանդ Վաւառաբնակ Ընկերացոյն, թէ յետ այսորիկ, Կիլիկիոյ մէջ յաճախ պիտի կարդան, Վաւառային Ընկերացոյն գրութիւնները, բայց այնպիսի գրութիւնք, որք օգտակար ըլլան Ընդհանրութեան. զի մեր սկզբունքն է և ուխտն, Ընդհանուրին օգուտն ու յառաջադիմութիւնն.

Իրաւ է որ, Ընկերային զանազան Օրագրոց և Լրագրոց մէջ, յաճախ կկարդացուին Վաւառաներէ եկած նամակք և գրութիւնք, բայց եթէ չենք սխալիր, կրնանք ըսել թէ, եթէ ոչ ամենքն ալ, գրեթէ մեծագոյն մասամբ, Հասարակութեան մէջ գժտութիւն, վէճ յարուցանող, կիրքերն աւելի յուզող, կողմնակցութիւններն (որք միշտ պիտի գտնուին) վերսկսող, երբեմն ալ, որ խիստ ցաւալին է, ատոր կամ անոր գործիք ըլլալով սուտ և անիրաւ զրպարտութիւններ պաշտպանող, և այլն հրատարակութիւններ են. մեր այս ըսածներն ապացուցանել հարկ չեն թողուր, լրագրաց և օրագրոց մէջ ամէն օր հրատարակեալները, մենք ազատութիւնը սիրողներէն և անոր զարգացման աշխատողներէն ըլլալով, կյարգենք մամլոյ ազատութիւնն ալ. բայց կփափաքինք միանգամայն որ այս ազատութիւնն, ինչպէս ամէն կէտերու մէջ, այս պարագային մէջ ալ, չարաչար կերպիւ չգործածուի. Մեծարգոյ Խմբագիրը, որ և է նամակ կամ գրութիւնք, անմիջապէս հրատարակելու չենք, մինչև որ չստուգենք նոցա ճշմարտութիւնն. որպէս զի գրողներն ալ չհամարձակին այսպէս, շատ անգամ յանիրաւի, զրպարտութիւններով լեցուն գրութիւններ ուղարկելու.

Իրաւ է որ դիւրին է որ և է մեկու մը համար, գոռ, մոլի, և այլն զրպարտել, բայց պէտք է ապացուցանել. մեր Ընկերացոյն մէջ, սովորութիւն եղած է, ամէն տեսակ զրպարտութիւններ ընել, Ռաջնորդի, Հարոզչի, Հոգաբարձուաց, Թաղական Խորհրդոյ, այս կամ այն Ընկերոջ մը համար. բայց շատ քիչ անգամ, չըսեմ ընաւ, գտած ոչ տեսնուած է, և ըսածներն ապացուցած. այս ըսածնուս ամենէն մեծ օրինակ կրնանք յառաջ բերել, վերօրինակ Փանոսեան և Վաղուստեան, որոնց վրայ "Փունջ" օրագրոյն մէջ ամէն տեսակ խոսքեր կարդացուեցաւ, բայց ոչ գրողն ստուգեց, և ոչ իսկ Փանոսեան կամ Վաղուստեան, զատ հրաւիրեց զՓունջ. այսպիսի անցքեր մեզ

համար խիստ ուշադրութեան արժանի են, և նոյնպէս ըլլալու են ա-
մէն անոնց, որք կրնային Ընդհանուրին օգուտը, շահն ու յառա-
ջադիմութիւնն. որովհետև, Ազգի մը պատմութիւնը դրոշն, առաջ-
նորդն ու աղբիւրներն են, և պիտի ըլլան, նոյն ժամանակին հրա-
տարակեալ օրագիրք, լրագիրք և զանազան թերթերն. ուստի եթէ
նոքա, ինչպէս են հիմայ, ճշմարտութիւնն իրենց սկզբունք չունին;
քանի որ գործիք են կրից և շահու, ինչպէս կուզես որ խմբագրուե-
լիք պատմութիւնն ալ ճշմարիտ ըլլայ. մեր այս դիտողութեան նպա-
տակն, ոչ միայն ներկային նկատմամբ է, այլ մանաւանդ ապագային,
որնոր ըստ մեզ, ամենէն կարևորն է. զի ապագայիս մտածելով
միայն, կրնաք միանգամայն ներկայիս ալ ապահովել։

Հետևեալ նամակի առթիւ այս համառօտ դիտողութիւնն ըրինք;
կխափաքինք որ մեր այս տողերը բարի սրտով և հանդարտ գլխով
կարգացուին, ինչպէս հետևեալ նամակի մէջ պարունակեալ, ազգա-
յին դաստիարակութեան նկատմամբ, օգտակար կէտերն, որք կվերա-
բերին մանաւանդ Երիտասարդ Ազգայնոց. — վստահ ենք, որք նոքա
ևս, մեզ հետ համոզուած են, որ իրենց, ինչպէս և ամենուս, ըստ
ամենայնի յառաջադիմութեան առաջին և միակ պայմանն է սէրն ու
միութիւնը. զի ուր որ ատելութիւն, կիրք, գժտութիւն և այլն կը-
տիրէ, հոն ոչ յաջողութիւն և հետևաբար և ոչ իսկ յառաջադի-
մութիւն կարելի է . . . . . ։

«ԱՆՈՒՄ արեգակին մէկ յատկութիւնն է և թափանցիկ օդին մի-
ջոցաւ Երկրագունտիս վրայ կսփռի, լոյսն իրեն առընթեր ջերմու-
թիւն մ'ալ ունի, որուն կենդանարար զօրութիւնն արտադրիչ մար-
միններու գործելու կարողութիւնը կգօրացնէ և կշարժէ դէպ յայն
ընդհանուր գործնականութեան, որուն տեսարանը տաճար մ'է, ուր
հիանալով մարդս կտեսնէ միշտ անհուն Տեսչութիւն մը։

Նմանապէս լոյսը բնութեան առարկաներուն վրայ յայտնի և ո-
րոշ տպաւորութիւն ունի, նիւթոց վրայ կազդէ, անոնց գոյնը կորոշէ,
այլ և այլ, բայց աքանչելի երևոյթներով զանոնք կզարդարէ վերջա-
պէս կրնամ ըսել՝ մեզի ծանօթ եղող առարկաներէն չկայ բան մը,
որ ինչ որ է հիմակ առանց լուսոյ իրոք ալ այնպէս տեսնուի. թէ-
պէտ և մութ տեղի բոյսերը կաճին և կերկննան, բայց կըսուի որ չեն
հասնար, կանանչ գոյներնին կկորսնցնեն կճերմկին և կթոռմին.
մարգուս ալ միայն տեսանելի մասն, ըսել կուզեմ մարմնական զար-
գացումն յիշեալ ընդհանուր կանոնին ենթադրուած է, սակայն բա-
նական զարգացումն անկէց տարբեր է, և ինչպէս նիւթական մասին
զարգացումն ու ծաւալն և միանգամայն վայելուչ գեղեցկութիւնը
լուսոյ և ջերմութեան գործն է, այսպէս ալ բանական մասին անըն-
դհատ բարգաւաճումը դաստիարակութեան լուսոյն ցոլացուցած մէկ
յատկութիւնն է. որովհետև դաստիարակութեան արևոյն պայծառ
ճառագայթները միշտ մարդկային ուսման և դիտութեան ընդունարա-
նին վրայ կշտկուի, որ ըսել է մտքին, և որով ընդունած լաւ դաս-
տիարակութեան հետ աստիճանաբար կլուծրանայ։

Կըսեմ ստոյգ է, պրպղ ապակին որչափ հեռու բռնուի լուցկիկ առարկային, ապակիին ներգործելի ճառագայթներն այնչափ աւելի ամիւռի կըլլայ գործունէութեան մէջ, ու այսպէս միտքն որչափ հեռանայ տգիտութենէ, նոյն համեմատութեամբ ալ առողջ կըլլայ բանականութիւնն և որով միայն կրնայ լաւ կառավարել խորհուրդներն և իշխել կամքին։

Ստոյգ է որ արեգակը հորիզոնին վրայ վերանալով գնտակի մը նախ մակերևոյթը կամ արեգկի կողմը կլուսաւորի և կտաքնայ, իսկ տաքութիւնը ծմակ (շուք) կողմն ալ կմղուի, այնպէս որ սուղ միջոցի մէջ ամբողջ գնտակը հաւասարապէս կտաքնայ, սանկ ալ դաստիարակեալ միտքն ստացած բարոյական ճառագայթներովը միշտ կլուսաւորէ և կբարեկարգէ ներքին յատկութեանց հաղորդակցութիւնները։

Այն աստեն սիրտը մոխանակ անիրաւութեանց ասպնջական պարէղ բացուելու բարոյական ղգացմունքի նաև անոր գործնական պայմաններու ընդունարան կը յարդարուի, այսինքն զգեզ մարդկային ընկերական կենաց պարտաւորութեանց օրէնքներուն ճամբան կը դարձընէ, զորօրինակ, կիրքերնիս կսանձէ, մոլութիւններս կըզսպէ և ըզմեզ առաքինութեան յորդորելով եղբայրասէր, աղգասէր, մարդասէր և Աստուածասէր կընէ։

Առողջ բանականութիւնն անհատին իւր կենացն և իրաւանցը վայելման ճաշակը նախ այլոց կենաց ու իրաւանց ապահովութեանը հսկելու անհրաժեշտ հարկին մէջ կգտնէ, որով անհատիկ մէջ պարտուց և իրաւանց գործադրութեանց հաւասարակշռութիւն կտիրէ, ուստի ասով ալ անիրաւութեանց և զրկողութեանց հակամտութիւնը մարդկանց մէջէն պակսելով՝ ամէն ոք իր առօրիկ պէտքը թէ ինքնին և թէ աշխատութեամբ հոգալու յօժարութիւնը կունենայ, որ և աշխատութեամբ ալ մարմնոյն ֆիզիքական կարողութիւնները ներդաշնակաւոր եղանակ մը ունենալով հաւասարապէս ու առաւելապէս կաճին ու կզօրանան, ըստ որում մարմինն ալ առոյգ ու առողջ կմնայ, և ի վերայ այսր ամենայնի քաղաքական կրթութեան ու յառաջադիմութեան յարմար արդասիք կունենայ։

Ո՜հ, ընդհանուրին Տարեկամ, բայց մանաւանդ ինձ սիրելի Լմբագիր, ազգային յառաջադիմութիւնը սիրող անձի մը համար առաւել ցաւալի բան մը չկրնար ըլլալ քան թէ ազգային դաստիարակութեանն ամրութեան սեաթոռը գրօշն իր երկրին մէջ ալ տեսնելով, անհնարին գործէ որ իւր սրտին մէջ ազգութեան սիրոյ վառ մը կրողը իր աչաց առջև հանապազորեայ վկայացող այն խղճալի ամիռոխին ներկային իրական հետևանացը վրայ չկարեկցի, և իր սրտի խորերէն սուր հառաչանքով մը անոնց վիճակին բարւոքումը չխորհի։ դաստիարակութեան ամրութիւնը վերցնելը դիւրին բան չէ, այլ նոր բարեկարգութեամբ միայն կրնայ ըլլալ։ Ղոր պէտք է Կրշկացին ալ ճաշնայ և գործէ։

Ըրդ եթէ Կրշկացին ներկայ դաստիարակութեանն ամրութեան թշուառ առաջն առնուլ կուզէ, չարիքն ոնր ըլլալն և ուրկեց առաջ գալը հասկնայ։ որպէս զի դարմանն ալ դիւրին ըլլայ։ այս

մասին համոզումս այս է որ առանց դպրոցաց միութեան անհնարին է գաստիարակութեան բարգաւաճ և տևողական դիրք մը տալ, որով հետև դպրոցական յառաջադիմութիւնը զօրաւոր սկզբունքներու կը կարօտի և այս սկզբունքները ձեռնհաս միջոցներու տակ անհրաժեշտ պարագաներու, սկզբունքն է ուսումն. միջոցն է դաստատուն. իսկ դաստատուն հայեցողական պարագայն է ոսկին, ուստի բաժանումը բնականաբար պարագային նուազումն կուտայ, նուազումն ալ միջոցի կարօտութեան նաև միջոցի զգալի թերութեանց ակամայ ներելով սկզբունքի լուսափայլ արժէքն ալ կնսեմանայ. երկրորդ, բաժանումը միևնոյն ազգի ժողովրդոց մէջ խտրութեան դրբիւռ կուտայ, խտրութիւնն ալ զանազան առիթներէ հրահրուելով խտրողութեան կրիւոխութի, ուր եսական ոգին երևան ելլելով իրարատեցութեան, խռովութեան և անմիաբանութեան չարիքը միևնոյն արիւն կրող անհատներէ անխղճաբար ի գործ կդրուի, ճիշտ այս ատեն է որ ազգին ամենէն կարևոր պէտքերը դառնաչունչ կիրքերու առջև մրրկի մէջ թաւալող փոշիի մը արժէք կունենան, որոյ վտանգաւոր փորձը ներկայ Երընկան իրօք կկրէ, թէպէտև ներկայն չզգար, բայց թոյնը խմողը մահուան դողն ապագային մէջ կհասկնայ. արդի Երընկան իրարատեցութեան թատրոն մըն է, իրար թշնամանելու աղէկ կերպը լաղցող դերասանին մրցանակ կայ, այն ալ . . . . :

Արդ Երընկացիք, ալ բաւէ, սթափիենք թմրութենէ, դառնանք մտութենէ, ու խաւսելէ, կրենք ազգասիրութեան հուրն, որոյ փայլմամբ յայտնի ճանչնանք չարը, սիրտ առնենք, խորտակել նորա խարդախ մեքենայից չարքն, որ ալ փափուկ սրտերու ազգասէր զգացումը չվերաւորէ :

Արդիկ ազգասիրութեան հուրն յունական հրոյ նշանակութեամբ կմեկնեն, զոր բոլոր դիմադիր դժուարութեանց յաղթելով, վառվռուն փանոսեանի պէս հանրութեան գործ կտեսնէ. մէկ կայ որ հազար կարժէ, հազար կայ որ մէկ չարժէր :

Այն ազգասիրութեամբ, Երընկացիք, մենք ալ հնգական վայրկեանի հեռաւորութեամբ հաստատուած թագական չորս դպրոցներն մէկ արական և մէկ ալ իգական բարեկարգ դպրոցի կրնանք փոխել, և հոն հաւաքեալ մտադիւր ջանից ներքև երևան ելլող երկու սեռի մտաւորական և սրտի կրթութեան բեղմնաւորութիւնն անտարակոյս մարդկային ազգի աղնուականութիւն կնոստանայ : Որ առանց յիշեալ կրթութիւններու ընտանեկան և ընկերական խաղաղութիւն յուսալը մեծ յիմարութիւն է, և առանց սրոյ հանրութեան մէջէ խել մը անկարգութենէ վերջ տալու ջանքն երազի մէջ թշնամիէն փախչելու անկարող ճիգն է. ուրեմն, Երընկացիք, զարձեալ կրսեմ դաստիարակութեան ոճն ու յարգն եկէք ճանչնանք, որ եթէ ոչ մեր, գէթ մարդկութեան արժանաւոր փառքն յաջորդ սերունդին ճակատը փայլի և որ մեր նուիրական պարտքն է :

Կենդրեմ ընդունեցէք ներկայս ; Արեծասպատիս խմբագիր, Ձեր մարդկային կեանքի բարեկամ Ա.մանթերթին մէջ, որոյ առթիւ հա-

մարձակիմ այսուհետև երբեմն տեղական աղգայնոց կացութեան կարևոր ծանուցումները հանրութեան տալէ չզլանալ ։

4 դեկ՞ 1867 մնամ Ձեր արդիւնաւոր գրչին երախտագէտ

Երզնկա Սարգիս Վ· Ըհարճևանց

Մեծապատիւ խմբագիր

Հաստատամտութեան, ջանքի և կամաց թափանցիկ զօրութեանց վրայ Ձեր գրած խորհրդածութիւնդ այնչափ խոր թափանձեցին իմ սրտիս մէջ զոր կարդացած կէտէս ամէն ինձ դժուար երևցած բաներն սկսայ հաստատամտութեամբ, ջանքով և կամօք գործել, որոնց միջոցաւ գտած յաջողութեանցս համար շնորհակալութիւններ կը մատուցանեմ Ձեր մեծապատուութեանը Ըմնաթերթերունդ 8· ը թուոյն մէջ հրատարակած հանելուկին միջոցաւ, որ եթէ չեմ սխալիր հետևեալ մեկնութեամբ գտած եմ թէ ֆեռոսը էրէն է ։

Ընդոնէ անյայն խօսող քեզան,
Որմէ անզգայ և յայտարար մարդկային մտաց·
Աչխարհակալ ֆուէր սրովյն·

Թէև փոքրիկ բայց կը կրէ իր մէջ զօրութիւն մը բոլոր աչխարհի ամէն յատկութիւնքը նկատելու ։

Ո՛չ ոք կարէ խմանալ զայն, քայց երբէ այնք որք հաչ խոկան·
Պիտուններըը միայն կարող են զայն գործածել·

Երբէ յորոկ խօսիլն ուզես, պէտք է լեզուին ծայրէն կրես ։
Եթէ ուզէ մարդ որ լաւ գրէ պէտք է որ ծայրէն կարէ ։

1868 փետրվար 1 ։ Յակոբ Լ· Պահլաւունի·

Խասգիւղ Յառանգ՞ աշակերտ ։

Ը· Ն· Ըահնազարեան գիշ· Վարժարանի

Ներ մեծապատիւ բաժանորդներէն Ըստուածատուր Ըղայ Տէր Պօղոսեան (Ջիմիշկեզեկցի) մէկ օրինակ Ալիշկիա նուիրեց ; Ոսկեճուխի դպրոցին ։

Պաւառներէ եկած մէկ քանի նամակաց հրատարակումն այս անգամ տեղ չունենալով, յաջորդ թուոյ թողուցինք ։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

1· Կոստանդնուպոլիս· — Ամաթերրիս Գործակալութեան սենեակն է Գալաթիա, Տէյիրմէն խան· թիւ 11· —
2· ԻԶՄԻՐ· Պ· Մ· Մամուրեան:
3· ՍԱՄՍՈՆ· Խալատոբ Աղայ Սալճեան:
4· ՏՐԱՊԻԶՈՆ· Խ· Ա· Էլմանեան:
5· ՊՐՈՒՍԱՑ· Սեպուհ Աղայ Անդրեասեան:
6· ԹԷՒՐՏԱՂ·
7· ԻԶՆԻՄԻՏ· Աբրահամ Ա· Աղայ Մատթեոսեան:
8· ԱՏԱԲԱԶԱՐ· Տիգրան Աղայ Պոյաճեան:
9· ԱՆԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ·
10· ԿԻՏՎԷԻ ՄԻԶԱԳԻՒՂ· Մարտիրոս Աղայ Մահտեսի Ագամհաճ:
11· ՊԱՂՃՋՃԱԻՂ Մկրտիչ Աղայ Տ· Յակովբեան:
12· ՖԵՐԱՍՕՆ· Ա· Յ· Աղայ Վէլիտեան:
13· ՍԵԲԱՍՏԻԱ· Անդրանիկ Էֆենտի Վարդանեան:
14· ԷՐԶԻՆԿԵԱՆ· Սիւրէն Գ· Անթաբեանց:
15· ՀԱԼԷՊ· Նիկողոս Աղայ Տ· Մարգարեան:
16· ԱՐԱՊԿԻՐ·
17· ԹՈՓԱԹ Գեորգ Աղայ Խատէմեան:
18· ԵԱՄ· Մ· Յարութիւն եւ Յովհաննէս Քալէմքեարեան:
19· ԱՏԱՆԱ· Միհրան Աղայ Մկրտիչեան· ժամագործ:
20· ԿԱՐԻՆ· Ս· Սեպուհ Մհացականեան Աղայ Վարժապետեան եւ Մարտիրոս Աղայ Բրուտեան:
21· ՎԱՌՆԱ· Գրիգոր Ե· Մարուտեան:
22· ՎԱՆ· Խազար Աղայ Նատանեան:
23· ԵԳԻՊՏՈՍ·
24· ԷՆԿԻՒՐԻ·
25· ԵԱԾ· Խ· Գարագաշեան եւ Պ· Լուսիկ Սրմագաշեան:
26· ՊՕՐՈՒՇԱՆ· Յարութիւն Մ· Աղայ Յակովբեան:
27· ՌՈՄԱՆ· Դաւիթ Աղայ Պալասան:
28· ՓԱՐԻԶ· Մ· Ներսէս Ս· Միշպուրեան rue St· Jacques· N. 161·
29· ՌՈՒՍԱՍՏԱՆ·
30· ՊԱՐՍԿԱՍՏԱՆ·
31· ԿԱԼԿԱԹԱ· Յովհաննէս Աղայ Ավետեան:
32· ՊԱԹԱՎԻԱ· Գրիգոր Աղայ Նահապետեան:
33· ԱՄԵՐԻԿԱՑ·
34· ՌՈՒՍՃՈՒԿ· Յակոբ Ս· Ա· պատուելի Քարթվէնեան:
35· ԽԱՐԲԵՐԹ· Արժանապատիւ Արիստակէս վարդապետ:
36· ՅԻԼԻՊՈՒ· Նշան Մ· Աղայ Շիլհանեան:
37· ԹՈՒԼՑԱ· Աբրահամ Աղայ Բօրովիկ:
38· ՄԵՆ ՆՈՐ ԳԻՒՂ ՓԱՐԻԶՈՒ· Տ· կարապետ Քահանայ Պիւճիկեան:
39· ԷՏԻՐՆԷ· Թարոս Աղայ Յովհաննէսեան:
40·

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱՆՆԵՐԸ

Ա· ԿԻԼԻԿԻԱ, ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՆ 32

Բ· ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՆԸ ԳՈՐԾԱԿԱՆ Է·

Գ· ՏՐԱՄԱՆ ԿԱՐՃԸ ԿԱՆԽԻԿ ՄԻԿ ԱՐԴԱՓ ՄԵՇԻՏ Լ·

Դ· ՄԻՆ ԲՈՒՆԱՅ ՀԱՅՆ Է ԵՐԿՈՒՐ ՂՄՈՒՀ, Ե ՐՆԴԱՌ ԼՈՒՆԱՅ ՅՈՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ, ԱՅՆՔԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ Ե·

Ե· ԴԱՐԱՆ ԵՐԿՈՒ ԱՆՁԵՐԻՆ ՀԱՄԱՐ ՄԱՀԱՊԱՏԱՆ ՈՐՈՂՈՒՄՆ ՎՐԱ Է·

Զ· ԱՄԱՌԵՐԸՆ ՔԱՐԲԵՐԵԼ ՆԱՄԱԿ Ե ՅՕԳՈՒՏԱՓԷՆ ՀԱՍՑԷ ՀԱՍՑԷ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ·

Տոքթր Մ· Բ· Ութուճեան, խմբագիր Կիլիկիոյ ամսաթերթին·

Կոստանդնուպոլիս· Ղալաթիա· Տեյիրմէն խան· թիւ 14·

Docteur M. P. Utudjian, rédacteur du *Guiliguia*

Revue Hygiénique Arménienne.

Constantinople, Galata, Deyirmen han N°. 14.

Ամսաթերթիս խմբագիր, Տոքթր Մ· Բ· Ութուճեան կ՚ուզէ հաստատել, որ ամէն երեքշաբթի օր մինչ 12 իր տունը պիտի գտնուի, ինչպէս նաեւ ամէն ուրբաթ օր մինչ 2ն տասնօրեան, իսկ իր գրասենեակը, Ղալաթիա, Տեյիրմէն խան թիւ 14 պիտի մնայ·